

9994

3RACS

12-28

№ 45 ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 45

463

ՏԸ. ՌԵՋԱԼԻՑԿԻՆ

= Ե Վ Զ Ե =
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՅՄ

ՅԵՐԵՎԱՆ - 1927

12-28

24 SEP 2006

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 09 DEC 2009

ՀԿԸՄ 54

Բ-28

ՏԱ. ՌԵՋՎՈՒՇԿԻՆ

==== Ի՞ն Զ թ =====

ԿՈՄՅԵՐԻՏԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ

14216

Օ. Գ. ԿՈ-Ա.Վ.ՉԵՆԿՈՎԻ
ընդհանուր խմբագրությամբ

Հանձնարարված և Համ. կՅԵՄ կկ Ազիտ-պրոպի
կողմից

Թարգ. ԳԵՎՈՐԳ. ՊՈՐԻՍ

1463
225



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1927



24 JUL 2013

9994

Դրառեպվար № 915ը. Հրատ. № 477. Տիրաժ 4000.
Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում—514.



5002-91

1. ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱԼ, ԹԵ Ի՞ՆՉ Ե ԿՈՄՅԵՐԻՏՄԻՌԻ-
ԹՅՈՒՆԸ

Թվում ե հեշտ բան չկա, բան պատասխանել «ի՞նչ ե կոմյերիտմիություն»ը հարցին:

Ամեն մի կոմյերիտական պարզ կերպով պատկերացնում ե այս նա ամեն որ մասնակցում ե կոմյերիտմիության աշխատանքին, լինում ե ընդհանուր ժողովներում, խմբակների պարագաներներում, բուռոյի նիստերում, թերևս գործունյա անդամ ե, վորևե հասարակական կազմակերպության նախագահ:

Միաժամանակ յեթե նենց նույն կոմյերիտականին, հատկապես նորեկին, հարցնենք, ի՞նչ ե կոմյերիտմիությունը՝ նա հազիվ թե մեկից լրիվ ու լիովին ճիշտ պատասխան տա: Նա ցույց կտա կոմյերիտմիության գործունեյության կողմերից մեկն ու մեկը, նու թեկուզ՝ «կոմյերիտմիությունը բանվորագյուղացիական յերիտասարդության շահերի պաշտպանն ե», «կոմյերիտմիությունը կուսակցության ոգնականն ե» կամ «կոմյերիտմիությունը կոմմունիզմի դպրոց ե»:

Այդ պատասխանները ճիշտ են:

Բայց նրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած լրիվ պատասխան չե «ի՞նչ ե կոմյերիտմիություն»-ը հարցին.

Առանց իմանալու ի՞նչ ե կոմյերիտմիությունը, առանց իմանալու կոմյերիտմիության խնդիրները չի կարելի աշխատել նրա մեջ: Ուստի իզուր չե, վոր կոմյերիտմիության ծրագրի առաջին հարցերից մեկն ե «ի՞նչ ե կոմյերիտմիությունը»:

Միության յերիտասարդ անդամին ու հատկապես նրա մեջ մանողներին «ի՞նչ ե կոմյերիտմիություն»-ը հարցի փոխարեն հարցնում են «գիտես միության ծրագիրը»:

Յեկ իզուր չե: Զե՛ վոր վոչ բոլոր կոմյերտականները գիտեն իրենց կազմակերպության ծրագիրն ու կանոնադրությունը: Մինչեւ, կանոնադրության 10-րդ կեսն ասում ե՝ «Յուրաքանչյուր կոմյերիտականը պետք ե լավ իմանա իր միության ծրագիրն ու կանոնադրությունը»:

Այստեղ քննելով «ի՞նչ ե կոմյերիտմիություն» հարցը, միաժամանակ կը քննենք մեր ծրագիրը, վորովհետև միության ծրագիրն այդ հարցին պատասխան ե տալիս:

Ծրագրում ասված ե, վոր կոմյերիտմիու-

թյունը հանդիսանում ե բանվորագյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպությունը: Այստեղ խոսվում ե այդ յերիտասարդության շահերը կոմյերիտմիության կողմից պաշտպանելու, խորհրդային հանրապետությունների պաշտպանությանն ու սոցիալիստական շինարարությանը մասնակից դառնալու մասին: Այստեղ խոսվում ե կոմյերիտմիության մասին, վորպես կոմմունիզմի դպրոցի, կոմյերիտմիության դերի մասին, վորպես կոմմունիստական կուսակցության ոգնականի, նրա հետ յեղած փոխհարաբերության մասին, կոմյերիտմիության դերի մասին միջազգային յերի ռասարդական շարժման մեջ, կոմյերիտմիությունը Լենինյան վերանվանելու մասին:

Այդ բոլոր հարցերի վրա այստեղ հերթով կանգ կառնենք:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչու պետք ե իմանալ, թե ի՞նչ ե կոմյերիտմիությունը:
2. Կարմաղ ե կոմյերիտականն իմանալ, թե ի՞նչ ե կոմյերիտմիությունը, յեթե նա չուսումնասիրի միության ծրագիրն ու կանոնադրությունը:
3. Կոմյերիտմիության ծրագիրը:

2. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՒԵՍ ԲԱՆՎՈՐԱ-
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՍԱՅԱ-
ԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՈՌՈՒԹՅՈՒՆ

ԲՈՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒ-
ԹՅՈՒՆ ՄԱՍՍԱՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԺՈՒՄԸ ՍԿԱԳՈՒՄ
ՓԵՇՐՎԱՐԵՍՈՒՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՄԻ-
ՑԱՊԵՍ ՀԵՑՈ

Բանվոր յերիտասարդությունը մինչև ցա-
րիզմի տապալումը (այսինքն մինչև փետր-
վարյան հեղափոխությունը) չի ունեցել իր կազ-
մակերպությունները։ Նա մտնում եր հասակա-
վորների կուսակցական կազմակերպությունների
մեջ։ Ցարիզմի դեմ մղվող պայքարը, ընդհա-
տակային աշխատանքը, ուժերի պակասությու-
նը, — այս բոլորն ստիպում եյին հասակավորնե-
րին ու յերիտասարդներին միանալ մեկտեղ հե-
ղափոխական պայքարի համար։ Մասսամբ միայն
կազմակերպված եր սովորող յերիտասարդու-
թյունը, վորը դեռ մինչև 1905 թիվը ուներ խմ-
բակներ։ Բայց սովորող յերիտասարդության արդ
կազմակերպությունները վոստիկանների և ժան-
դարմաների հալածանքների պատճառով չկարողա-
ցան գառնալ իսկական մասսայական շարժում։

Անչափահաս բանվորները, վոր այն ժա-
մանակ աշխատում եյին գործարաններում ու

ֆարբիկաներում, 1917 թվին՝ փետրվարյան հե-
ղափոխությունից հետո առաջին անգամ հնարա-
վորություն ստացան կազմակերպված գուրս գալ
իրենց շահերը պաշտպանելու համար։ Մոսկա-
յում, Լենինգրադում և ուրիշ խոշոր արդյունա-
բերական կենտրոններում բանվոր յերիտասար-
դությունը վոտքի յելակ անչափահասների և յե-
րիտասարդների բանվորական որը կրծատելու,
արհեստի ուսուցումը բարելավելու և իրենց աշ-
խատանքը պաշտպանելու համար։

ԻՆՉՊԵՍ ՍԿԻԶԲ Ա.ՌԵՅ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Բանվորագյուղացիական յերիդասարդության
մասսայական կոմմունիստական կազմակերպու-
թյունները ձևակերպվեցին ու սկիզբ առան յեր-
կու զիմավոր ճանապարհով։

Առաջին ճանանապարհը — յերբ այդ կազմա-
կերպություններն առաջացան հենց յերիտասար-
դության նախաձեռնությամբ՝ Փարբիկաններում
ու գործարաններում, գյուղերում, մյուս կազ-
մակերպություններից անկախ, առանց նրանց
ոգնությանը։

Մյուս ճանապարհը — յերբ կուսակցության
կոմիտեներին կից ստեղծվեցին յերիտասարդու-
թյան խմբակներ կամ խմբեր, յերբ յերիտասարդ

կուսակցականները անկուսակացական յերիտասարդության լայն մասսաների մեջ մասսայական աշխատանքի անցան։ Այդ եր պարտավորեցնում նույնպես կոմմունիստական կուսակցության VII համագումարի վորոշումը, վորն արտահայտվեց յերիտասարդության նեղ—կուսակցական միավորության դեմ և այնպիսի միավորություններ ստեղծելու կողմանից յեղավ, վորոնք աշխատելին կուսակցության զեկավարությամբ և ընդգրկելին վոչ թե անհատներին ու փոքրամասնությունը, այլ յերիտասարդության մեծամասնությունը։ Միայն ալղափիսի դեպքում կարելի յեղավ աշխատանքը մասսայական անվանել։

Փետրվարյան հեղափոխությունից հետո առաջացած յերիտասարդական կազմակերպությունների առանձնահատկությունն եր նրանց խայտաբղետությունը և իրենց առաջ դըրած նպատակների և խնդիրների խոշոր տարբերությունը։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Տարիզմի տապալումից հետո նախև առաջ առաջացան բանվոր յերիտասարդության կուլտուրական կազմակերպությունները։ Այդ տեսակի կազմակերպություններ եյին Պիտերի

«Աշխատանք ու կույս»-ը, Յեկատերինոսլավի «Փարոսը» և ուրիշները։

Այդ կազմակերպությունները հաճախ զըտնվում եյին կոմմունիստական կուսակցության խորթ ու նույնիսկ թշամի մարդկանց ազդեցության տակ։ Այսպես, որինակ. «Աշխատանք ու կույսը» գտնվում եր բուրժուական կուսակցության անդամ Շեցովի ղեկավարության տակ, «Փարոսը» մենշեկինների ղեկավարության տակ։ Այդ կազմակերպությունն այդպես ել կոչում ելին — «Մենք և ի կական մոմ։»

Բայց ացդ կազմակերպությունները յերկար գոյություն չունեցան։ Նրանց ղեկավարներն իրենց գլխավոր խնդիրը համարում եյին ուսուցումը, կուլտ-կրթական աշխատանքը և յերիտասարդությանը չեյին թույլ տալիս մասնակցել քարեքական կյանքին։

Այսպես, որինակ. Շեցովը գրում եր՝ «Թողմեր հայրերը հօգան բուրժուազիայի դեմ հետագա հաղթանակներ տանելու ժամանակ, իսկ յերիտասարդությունն առաջին հերթին պետք ե սովորի»։ «Փարոս»-ն ասում եր՝ «Մեր խնդիրն ե սովորել։ Մենք դեռ յերիտասարդ ենք քաղաքական կյանքի պարբի համար։»

իհարկե, սովորելը յերիտասարդության ամենագլխավոր խնդիրներից մեկն ե, բայց միան դա քիչ ե, նա պետք ե սովորի և պատքարի, ժամանակի քաղաքական կյանքին:

Այդ կազմակերպությունները յերիտասարդական շրջման պատմության մեջ առանձին նշանակություն չունեցան, նրանք շուտով այլասեռագեցին «Յերիտասարդության սոցիալիստական միություններ»-ի մեջ ու դրա հետեւանքով իրենց անդամների լավագույն մասը տվին Յերիտասարդության կոմմունիստական Միությանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Կարևոր դեր կատարեցին «բանվոր յերիտասարդության սոցիալիստական միություններ»:

Այդ կազմակերպություններն առաջացան Պիտերում, Ռւբալում, Յեկատերինբուրգում, Վյատի, Պերմի և ուրիշ նահանգներում: Նրանք նույնպես գոյություն ունեցան Մուկվայում, Հարավում, Յեկատերինուլավում, Խարկովում, Ռիեսում և այլն:

Այդ կազմակերպություններն իրենց գործունելության բնույթով շատ են տարբերվում «կուտարականության» կազմակերպություններից,

թեև այնտեղ դեռևս բավականին ուժեղ ե կուտարականությունը: Բայց համենայն դեպս այդ կազմակերպությունները չկանգնեցին բուրժուազիայի դեմ դասակարգային կոիվ մղելու ճանապարհի վրա:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ «III ԻՆՑԵՐՆԱ- ՑԻՈՆԱԼ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարյան հեղափոխությունից հետո առաջացած յերիտասարդական կազմակերպություններից կոմմունիստական կուսակցությանն ամենից մոտիկ եյին յերիտասարդության «III Ինտերնացիոնալ» կազմակերպությունները: Բանվոր յերիտասարդության այսպիսի կազմակերպություններ կային Մուկվայում և Ռուբալինալում: Այդ միություններն իրենց շուրջն եյին համախմբել ավելի հեղափոխական բանվոր յերիտասարդությանը:

Կազմակերպությունների խալտարղետությունը պատկերացնելու համար, բավական եասել, վոր բացի այդ յերեք տիպի կազմակերպություններից, կային նաև յերիտասարդական ազգայնական կազմակերպություններ, վորոնք հատկապես տարածված եին Ռուբալինալում (ուկրայնական ու հրեյական յերիտասարդության) և նույնպես սովորող յերիտասարդության կաղ-

մակերպությունները, վորոնք առանձնապես ուժիղ կերպով աճում եյին:

**ԿՈՄՅԵՐԻ ՏՄԻՈՒԹՅԱՆ ԿՍՋՄՄԿԵՐՊՈՒՄՆ
ՈՒ ՍՀՈՒՄԸ**

Բանվոր յերիտասարդության խայտաբղետ, զանագանակերպ կազմակերպությունները չեյին կարող ոգնել աշխատանքի հաջողությանը: Պետք եր միասնական ղեկավար կենտրոն, պետք եր բանվորագյուղացիական յերիտասարդության միասնական կազմակերպություն:

Պիտերի ու Մոսկվայի կազմակերպություններն անցան համառուսական միություն ըստեղծելու աշխատանքին. 1918 թվի նոյեմբերի 28-ին հրավիրվեց համառուսական առաջին համագումարը, վորտեղ և ընդունվել ե ՌԿՅԵՄ—Ռուսաստանի Կոմմունիստական Յերիտասարդական Միություն կոչումը: I համագումարն առաջման միացրեց բանվորագյուղացիական յերիտասարդության համեմատաբար քիչ մասը: Այնտեղ ներկայացված եր 22,000 անդամ: Բայց արդեն II համագումարին, 1919 թվին, միության մեջ արդեն կար 96,000 անդամ: III համագումարին, 1920 թվին, 482,000 անդամ:

Այսպիսով, միությունն արդարացրեց իր

դերը, վորպես յերիտասարդության մասսայական կազմակերպություն:

Միության այդ բուռն աճումը կատարվեց քաղաքացիական կատաղի կոփմերի ժամանակ:

Բակաքացիական կոփմերից հետ, խաղաղ շինարարության անցնելիս, մոտավորապես 1920 թվի աշնանից, III համագումարին, միությունը ծանր որեր ապրեց, իսկ 1921 թվին միությունն արագ կերպով սկսեց կրճատվել:

Նոր տնտեսական քաղաքականության անցյան առաջին տարինն ու սովոր պատճառ դարձան արդյունաբերության մեջ յեղած յերիտասարդության կրճատման, նրա նյութական դրության վատթարացման, այստեղից ել միությունից հեռանալուն: IV համագումարին միությունը հաշվում եր արդեն 400,000 անդամ: V համագումարին 260,000 անդամ:

«Մեր միության V համագումարը, ասում ե Կոմյերիտմիության կերպարտուղար ընկ. Զապլինը, ընկած ե այդ անկման շերտի և նոր շերտի սահմանում, V համագումարից սկսում ե մեր միության վերելքի և ծաղկման շերտը՝ նոր պայմաններում, նոր տնտեսական քաղականության պայմաններում:

Ցեվ, իսկապես, մենք տեսնում ենք, վոր

VI համագումարին կոմյերիամիությունը հաշվում եր 700,000 անդամ։ Այդ անսովոր արագ աճումը բացատրվում է նրանով, վոր մոտավորապես 1922 թվի վերջից, հատկապես 1923 թվից, սկսում ե բարձրանալ ժողովրդական տնտեսությունը, ամրանալ պետական ապարատը, բարելավել յերիտասարդության դրությունը։

Սնկման շերտից միությունը գուրս յեկավ ու V համագումարից սկսեց աճել։ Համամիութենական VI համագումարից հետո շարունակվեց աճումը։ Համամիութենական VII համագումարին կոմյերիամիության անդամների թիվը հասավ արդեն 1,750,000-ի։

Պետք ե ասել, վոր այդ աճումը, առանձնապես VI համագումարից մինչև VII-ը, հատկապես ուժեղ եր կատարվում գլուղացիական յերիտասարդության հաշվին։

Միության աճումը մինչև վերջին ժամանակներս վոչ միայն չի կրծատվում, ընդհակառակը շարունակվում ե։ Յեզ մոտիկ ժամանակում կոմյերիամիությունն իր շարքերում կը հաշվի յերկու միլիոն միության անդամ։

Մենք ասացինք, վոր կոմյերիամիությունը բանվորագյուղացիական մասսական կազմակերպություն ե։ Վոր կոմյերիամիությունը մաս-

սայական կազմակերպություն ե, դա յերեաց միության աճման ան թվից, վոր մենք բերեցինք։ Միայն 1,750,000 միության անդամների թիվը, վորին կոմյերիամիությունը հասավ VII համագումարին, ասում ե, վոր կոմյերիամիությունը միացնում է յերիտասարդության հսկայական մասը, բայց կոմյերիամիությունը մասսայական կազմակերպությունն եվոչ միայն նրա համար վոր նա միացնում է զրեթե յերկումիլիոնանոց յերիտասարդական մասսա, այլ և նրա համար, վոր նա իր ազգեցությունը տարածում ե միլիոնա վոր անկուսակցական չկադարձակերպված յերիտասարդության վրա։

Մենք տեսանք, վոր I համագումարից մինչև VII-ը կոմյերիամիությունն աճեց զրեթե 85 անգամ։ Նա ինչպիսի՞ յերիտասարդության հաշվին աճեց։ Հենց բանվորագյուղացիական յերիտասարդության հաշվին։ Ավելի շատ գլուղացիական յերիտասարդության հաշվին։

Այսպես, VI համագումարին, 1924 թվի հուլիսին գլուղացիական յերիտասարդությունը հաշվում եր 322,920 հոգի, VII համագումարին, 1926 թ. մարտին—713,708 հոգի։

Այսինքն, գլուղացիական յերիտասարդության թիվը վերջին տարիների ընթացքում ավելացել ե զրեթե յերկու անգամ։

Դրա հետ միասին նկատվում ե, նաև բանվոր յերիտասարդության աճումը:

VII համագումարին բանվոր յերիտասարդությունը հաշվվում եր 281,502 հոգի, VII համագումարին 572,896 հոգի:

Նույնպես յերկու անգամ ավելացում ե կատարվել: Բայց գյուղացիական յերիտասարդության թիվը VII համագումարից մինչև VII-ը ավելացել ե 390,788 հոգով, իսկ բանվորների թիվը 291,374 հոգով: Սա նշանակրում ե, վոր գյուղացիական յերիտասարդության աճումն ավելի արագ ե կատարվել, բան բանվորների աճումը: Յեզ սա, այսպիսի գյուղացիական յերկրում, ինչպիսին ե մերը, ի հարկե ճիշտ ե:

Կոմյերիտամիության մեջ վոչ միայն բանվորագյուղացիական յերիտասարդներ կան, այլ նույնպես ծառայողներ, սովորողներ և այլն:

Բայց նրանց թիվը աննշան ե:

Այսպիսով, բերած թվերը բավականաչափ են խոսում այն մասին, վոր կոմյերիտամիությունն իսկապես բանվորագյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպություն ե:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչպիսի՞ կազմակերպություններ են մասսայական կոչվում:

2. Յերբ առաջացան բանվորագյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպությունները:

3. Փետրվարյան հեղափոխությունից հետո ինչպիսի՞ յերիտասարդական կազմակերպություններ ծագեցին:

4. Յերբ ե կազմակերպվել Համամիութենական կոմմունիստական Յերիտասարդական Միությունը:

5. Ինչպես ե ընթացել այդ միության աճումը:

6. Ինչքա՞ն բանվոր յերիտասարդություն ե հաշվվում միության մեջ:

7. Ինչքա՞ն ե գյուղացիական յերիտասարդությունը:

Ի՞նչ ԿԱՐԴԱԼ

1. Ակուր «ՌԿՅԵՄ պատմություն»-ը:

2. Ա. Շոլիխին «Համ. ԿՅԵՄ պատմություն»-ը:

ՏԸԾԶ-91
1003/14216



Յ. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԱՊՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒ-
ԹՅԱՆ ՊԱՇՏՈԱՆ

**ՅԵՐԵՑԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԿԵՑ
ՀՈԿԵՏԵՄԲԵՐԵՍՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

Առաջին մեծ գործը, վորին կոմյերիտմիությունը պետք եր մասնակցեր, դա Խորհրդային հանրապետությունը թշնամիներից պաշտպանելն եր: Այդ առաջին փորձությունը, կոմյերի միության համար յեղան քաղաքացիական կոիվսերը, կոմյերիտմիությունը ցույց տվեց, վորնա Խորհրդային հանրապետության հուսալի պաշտպանն ե:

Հոկտեմբերյան որերին յերիտասարդությունը մտնում եր կարմիր գվարդիայի շարքերը: Նա անտեղ կամովին եր մտնում, լեցնելով հասակավոր բանվորների զորամասերը և ստեղծելով յերիտասարդական հատուկ զորամասեր: Աղջիկները մտնում ելին սանիտարական զորամասերը: Այսպիսով Մոսկվայի, Պիտերի և ուրիշ հեղափոխական կենտրոնների յերիտասարդությունը մասնակցեց բոլոր կոփեներին, Մոսկվան պաշտպանեց, կատարելով կապի սպասավորությունը և այլն:

**ԲՐԵՍՑՅՈՒ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՕՐՄԻՐ ԲՈ-
ՆԱԿԻ ՍՑԵՂՄՈՒՄԸ**

Հոկտեմբերից հետո Խորհրդային իշխանության համար բրեստյան հաշտության հարցը մեծ փորձություն եր: Գերմանական իմպերիալիստները ուռասական հեղափոխության մեջ իրենց համար սպառնալիք ելին տեսնում ու սկսեցին հարձակվել յերիտասարդ Խորհրդային հանրապետության վրա, սպառնում ելին Պիտերին, վորը հեղափոխության սիրտն եր:

Բոլշևիկյան կուսակցության ու Խորհրդային իշխանության առաջ հարց դրվեց՝ բացաշհակ անհավասար կովի դուրս գալ ու հերոսաբար ընկնել կամ ժամանակավորապես նահանջել, համաձայնվել ստորացուցիչ հաշտությանը, վորպեսզի զինադադարի ժամանակ ամրանան մեր ուժերը, գերմանական բանվորներին հնարավորություն տրվի ոգնության գալու:

Այդ ժամանակ Խորհրդային իշխանությունն առաջին անգամ պարզ կերպով զգաց, վոր հեղափոխության պաշտպանության համար վորքան և անհրաժեշտ բանվորա - գյուղացիական կարմիր բանակը: Փոքրաթիվ, վատ զինված և անբավարար կազմակերպված կարմիր զվար-

դիայի զորամասերով կապիտալիստներին չեր կարելի հաղթել:

Ամբողջ կապիտալիստական աշխարհը դուրս յեկավ աշխարհում միակ սոցիալիստական հանրապետության դեմ: Դրա համար գեռ 1918 թ. գարնանից մեր լեռկիրն անցավ կարմիր բանակի սահեղծմանը:

ՀԱՅԱ-ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿՐԾՎԵ ՈՂԱԿՈՒՄ

Հոկտեմբերյան հեղափոխության առաջին կըռիվները վերջացան: Հաղթանակը, իսկ նրա հետ և իշխանությունը մնաց բանվոր դասակարգին: Բայց դրա հետ մեկտեղ, որն որին աճեց ներքին հակա-հեղափոխական վտանգը, վորն սկսեց ուժեր հավաքել Խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար: Ներքին հակա-հեղափոխության հետ մեկտեղ դուրս յեկավ նաև արտաքինը: Բուրժուական պետություններն սկսեցին գործել Խորհրդային Ռուսաստանի դեմ:

Նախ նրանք փորձեցին Խորհրդային իշխանությունը տապալել մեր լեռկրում գտնվող Զեխո-Սովակների զորամասերի միջոցով, վորոնք այդ նպատակով տարածվում եյին Սիբիրի յերկաթուղագծի ուղղությամբ: Սիբիրում խորհուրդները ցրվեցին, իշխանությունն այնուեղ անցավ

աղմիրալ Կոլչակի ձեռքը: Զեխո-Սովակների յելույթի հետ միասին Ուրալում սկսվեց ատաման Դուտովի հարձակումը:

Մի քիչ ուշ գերմանացիները ոռւս գեներելների աջակցությամբ մտան Դոնն ու Կուբանը: Հեռավոր Արևելքում հայտնվեց ատաման Սեմյոնովը: Ուկրայնայում կուլակային ապստամբություն բարձրացավ («Բատկո», «Մախնո»):

Անգլիացիներն իրենց զորքերը նավերով Արխանգելսկին մոտեցրին, հետո հայտնվեցին Ռուսաստանի հակառակ ծայրում, հարավում — Բագվում:

Դրա հետ մեկտեղ Խորհրդային Ռուսաստանի ներսում հակա-հեղափոխական ապստամբություններ պայմանացին: Մոսկվայում տեղի ունեցավ ձախ եսերների խռովությունը, Յարոսլավլում սպիտակ գվարդիականների ապստամբությունը, վորը կազմակերպված եր արտօասահմանան վոսկով եսեր Սավինկովի կողմից:

1918 թ. վերջում վերջացան պայմանների, ապստամբությունների և խռովությունների շարքը: Բոլոր հակա-հեղափոխական ուժերը կենարունացան ծայրամասերում:

Սոցիալիստական Ռուսաստանը շրջափակվեց կրկնակի ողակով:

Առաջին ողակը՝ ներքին հակա-հեղափոխական ուժերը և յերկրորդ ողակը՝ բուրժուական պետությունները:

**ԿՈՄՅԵՐԻ ԹՄԻ ՈՒԹՅՈՒՆ Ս.ՆՑԱՎ. ԽՈՐՀԾՐԴԱՑԵՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊԱՇՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Այդ ժամանակներում կարմիր բանակն արդեն ձևակերպվեց, 1919 թ. սկզբում նա ուներ 1 ու կես միլիոն կարմիր մարտիկներ, վորը բաժանված եր 14 բանակի: Հակա-հեղափոխության հարձակումը Խորհրդային կառավարությանն ըստիպեց բանակի թիվը հասցնել մինչև 3 միլիոնի:

Կոմյերիտմիությունն իր լավագույն ուժերը տվեց նրան: Դրա համար կոմյերիտմիությունը անցկացրեց համառուսական յերեք մոքիլիցացիա:

Սկզբում կոմյերիտմիությունը մոքիլիցացիայի յենթարկեց իր ուժերն ու ձգեց դեպի Արևելքը, Կոլչակի դեմ: Այնտեղ կարմիր բանակն առաջին մեծ հաղթանակները տարավ:

Նույն ժամանակ հարավից սկսեց Դենիկինի հարձակումը: Կոմյերիտմիությունը 1919 թ. աշնան հայտարարեց յերկրորդ մոքիլիցացիան:

Միաժամանակ հարավիցն եր հասունանում սպառնալիքը: Դենիկինի հարձակման ժամանակ Յուղենիչն արդեն յերկու անգամ հարձակվեց

Պիտերի վրա, բայց յերկու անգամն ել ջախջախվեց: Հետո լեհաստանի և Վրանգելի հետ սկըսվեց պատերազմը:

Կոմյերիտմիությունը յերը որդ անգամ մոքիլիցացիա հայտարարեց յեհական ճակատի համար: Կարմիր զորամասերը 1920 թվի ոգոստոսի 13 ին հասան մինչև Վարշավա: Բայց կարմիր բանակն “այդ ժամանակ արդեն հոգնած եր անընդհատ կոփվների ընթացքում: Հեռանալով իր զորամթերքներից (օбоՅ), նա նահանջեց լեհացիների հուսահատական հականարձակման տակ: Լեհական բուրժուազիան մենակեր, արդեն բավականին վախեցել եր ու շապալեց մեր առաջարկությամբ հաշտություն կընըել:

Բացի այս յերեք համառուսական գլխավոր մոքիլիցացիաներից, կոմյերիտմիությունը կատարեց մի շարք տեղական փոքր մոքիլիցացիաներ:

Քաղաքացիական կոփվների ընթացքում կարմիր բանակը կոփվ մղեց 10 ճակատում: Նրանցից ամեն մեկում կոմյերիտականներն առաջին շարքերումն եյին: Կոմյերիտմիությունը ցույց սկեց, վոր նա Խորհրդային հանրապետության ու հեղափոխության բոլոր նվաճումների հուսալի պաշտպանն ե:

ԿՈՄՅԵՐԻՑՄԱՆԻԹԻՈՒՆԸ — «ՄԻՇՏ ՊԱՅՐԱՍ»

Առաջին կոփիվներից մեր յերկիրը հաղթանակով դուրս յեկավ: Հիմա խաղաղ վիճակումն ենք ապրում:

Բայց սխալ կլինի մտածել, վոր լրիվ խաղություն ե հաստատվել: Հաստատվել ե միայն զինադադար: Թշնամիներն ամեն կողմից պատել են Խորհրդային հանրապետությունը: Նրանք մեզ ձանաչում են, մեզ հետ դաշնագրեր են կիրում, ընդունում են, վոր Խորհրդային իշխանության դեմ զինված կովում պարտություն կրեցին, բայց նրանք յերբեք չեն հաշտվում սացիալիստական պետության գոյության հետ:

Առայժմ միայն մեր յերկրի 130 միլիոն աշխատավորությունն ե ազատագրված. Դեռևս կը ոփիվներ պիտի լինեն կապիտալի լծից հարյուր միլիոնավոր աշխատավորներ ազատագրելու համար: Այս բոլորն աշխատավորությանն ստիպում ե հիշել ապագա կոփիվների մասին: Կոմյերիտմիությունը նույնպես պետք ե պատրաստ լինի այդ կոփիվներին: Կոմյերիտմիությանը կվիճակի հակահարձակման գնալ կապիտալիստների դեմ ու նոր հարձակումներ գործել կապիտալիստների վրա:

Յեկ սա կոմյերիտմիությունը միշտ հիշում է, միշտ պարասափում ե զբա համար: Դեռ քաղաքացիական կոփիվների ժամանակաշրջանում, 1919 թ. մայիսին, կոմյերիտմիության կ. կ. վորոշել ե միության բոլոր անդամների համար զինվորական պարագիր ուսումն սահմանել: Խորհրդային իշխանության Շ տարգա ընթացքում կոմյերիտմիությունը միշտ մորիկիզացիաներ ե կտարել հրամանատարական դասընթացքների համար: Կոմյերիտմիությունը հազարավոր ընկերներ ե տվել կարմիր նավատորմին: Վերջին ժամանակներս, կորմիրը բանակը 3 միլիոնից 600 հազարի հասցնելուց հետո, յերբ բանակում թողնվում ե մի յերիտասարդ տարեկան, կարմիր բանակը պետք ե լինի սպառազինված կոմյերիտմիություն: Բոլոր կարմիր բանակայինները — կոմյերիտականներ, ահա կոմյերիտմիության ողունգը կարմիր բանակի աշխատանքի տապարիզում:

Գյուղի համար մեծ նշանակություն ունի յերկրային զորամասերին անցնելը, այդ զործում կոմյերիտմիությունը, նույնպես պետք ե մասնակցություն ունենա: Նախազորակոչային պարագմունքների միջոցով կարմիր բանակը պատրաստվում է անցնել յերկրային զորամասերի շի-

նարարությանը։ Նախազորակոչային պարապմունքների կազմակերպմանը կոմյերիտմիությունը ակտիվ մասնակցություն ե ցույց տալիս, նա նույնպես մասնակցություն ե ցույց տալիս յերիտասարդության նախազորակոչային պարապմունքների կիրառմանը, վորովհետեւ վոչ միայն կոմյերիտմիութենական, այլև անկուսակցական յերիտասարդությունը պետք ե պատրաստվի բանվորների և գլուղացիների իշխանության համար մղվող առաջիկա կոկմերին։

Ներկայումս Խորհրդային իշխանությունն աշխատում ե ԽՍՀՄ աշխատավորությանը լայն կերպով ձանոթացնել ուազմական գիտելիքներին։

Կոմյերիտմիությունը պետք ե աշխատի ինչպան կարելի յե իր անդամների մեծ մասին քաշի ուազմական գիտելիքների, հրաձիգալին և այլն խմբակներում։

Կոմյերիտմիությունը պետք ե ձգտի իր անդամներից առողջ, գիմացկուն մարտիկներ դաստիարակել։ Կոմյերիտմիությունն եր ու կը մնա Խորհրդային հանրապետության հուսալի պաշտպանը։

ՀԱՐՔԵՐ

1. Ի՞նչու Խորհրդային հանրապետությունները ստիպված կլինեն պատերազմել։

2. Ի՞նչպես եր մասնակցում յերիտասարդությունը հոկտեմբերյան կոկմերին։

3 Կոմյերիտմիությունն ինչ մասնակցություն ե ունեցել քաղաքացիական կոկմերին։

4. Ի՞նչպիսի մոբիլզացիաներ ե հայտարարել կոմյերիտմիությունը։

5. Կարելի յե մտածել, վոր այլևս պատերազմ չի լինի։

6. Ցերք չի լինի բոլորովին պատերազմ։

7. Մեր որերում կոմյերիտմիությունն ինչպես ե ոգնում կարմիր բանակի ամրացման։

Ի՞՞ՆՉ ԿԱՐԴԱԼ

1. Ա. Լոխին «ՀԱՄԼԿՅԵՄ պատմությունը»։

2. Լեզուր «ՌԿՅԵՄ պատմությունը»։

4. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏԱԱՆ

ՅՈՒՐԱՔՅՈՒՉՅՈՒՆԻՐ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒՆԸ ՊԵՏՔ Ե ՈՐԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ ԼԵՆԻ

Հիմա պարզ ե մեզ, թե ինչպիսի դեր ե խաղացել կոմյերիտմիությունը Խորհրդապետության պաշտպանության գործում։ Իզուր չե, վոր կոմյերիտմիությունը կոչվում եր աշ-

խատավորական հանրապետության պաշտպանը,
նա արդարացրեց ու ձեռք բերեց այդ կոչումը:

Բայց կոմիերիտմիությունը նույնպես բան-
վորագյուղացիական յերիտասարդու-
թյան շահերի պաշտպանն է:

Ի՞նչ հիմնական խնդիրներ ունի կոմիերիտ-
միությունն այդ գործում:

Հիմնական խնդիրը կարելի յե համարել յե-
րիտասարդության ուսուցման կազմակերպումը
անշափահամերից փորձված բանվորներ և որի-
նակելի հողագործներ պատրաստելը. Դրա համար
յերիտասարդությունը սովորում է գործարանա-
յին - Փաբրիկալին աշկերտության դպրոցներում
կամ արտադրության մեջ՝ հասակավոր բանվոր-
ների ղեկավարությամբ, գյուղացիական յերիտա-
սարդության դպրոցներում, գյուղատնտեսական
տեխնիկումներում և այլն:

Ա.Ն.Չ.Փ.Հ.Ս.Հ.Ս. Շ.Ա.Վ.ՈՐԵՐԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անշափահաս բանվորների ուսուցումը կապ-
ված է գործարանների և ֆաբրիկաների
գործնական աշխատանքների հետ, և դրա համար
կոմիերիտմիությունն անշափահամերից փորձ-
ված վորակավորյալ բանվորներ պատրաստելու

խնդիրը կարող է լուծել միայն այն դեպքում,
յերբ արտադրության մեջն ունենա բավականա-
չափ թվով անշափահամեր: Արտադրության մեջ
անշափահամեր պահելու համար կենտղործկոմը
գեկրետ է հրատարակել, վորի համաձայն մինչև
18 տարեկան յերիտասարդների համար գոր-
ծարաններում ու ֆաբրիկաներում բը ո-
նի յե յենթարկվում ու թողնվում է
վորոշ քանակությամբ տեղեր: Կոմիերիտ-
միությունը հետևում է, վորպեսզի բը ոնիան
լրացվի և նրա մեջ քիչ լինեն չափահամեր (այ-
սինքն 18 տարեկանից բարձր յերիտասարդներ):
Կոմիերիտմիությունն ուշադրությամբ հետևում է
նույնպես բանվոր յերիտասարդության
վճարին: Աշխատավարձի կարգն ու չափը սահ-
մանվում է պայմանագրերով ու համաձայնու-
թյուններով, վորոնք կնքվում են արհեստակա-
կան միությունների և տնտեսական որդանների
միջն: Կոմիերիտմիության բջիջներն ես մաս-
նակցում են այդ աշխատանքին:

Կոմիերիտմիությունը շատ ուժ է թափում
անշափահաս բանվորների աշխատանքի և առող-
ջության պաշտպանության վրա: Անշափահաս
բանվորն աշխատանքի յե մտնում այն ժամանակ,
յերբ նրա որդանիզմը (մարմակազմությունը)

սկսում ե զարգանալ ու աճել: Վատ պայմաններն ու ծանր աշխատանքը վնասակար կերպով են անդրադառնում նրա առողջության վրա: Դրա համար կոմյերիտմիությունը հետեւում ե, վորպեսզի կյանքում կիրառվի որենքով սահմանված կրծառ՝ բանվորական որը՝ մինչև 16 տարեկան անչափահամերի համար 4 ժամ, 16 մինչև 18 տարեկանների համար 6 ժամ: Կոմյերիտմիությունը հետեւում ե նույնպես, վորպեսզի անչափահաս բանվորները չթողնվեն գիշերային աշխատանքի, արգելված, վնասակար արտադրության մեջ և այլն:

Մինչև 18 տարեկան անչափահաս բանվորները տարին մի անգամ յենթարկվում են պարտադիր բժշկական քննության, վորն անչափահաս բանվորների առողջության պաշտպանության գործում հիմնական աշխատանքն ե հանդիսանում:

Այս աշխատանքում կոմյերիտմիությունն ոգնում ե առողջապահական մարմիններին:

Կոմյերիտմիությունը հոգում ե, վորպեսզի անչափահաս բանվորները վրքան կարելի լավ կերպով ոգաւագործեն արձակուրդը, կազմակերպում ե յերիտասարդության ուղեորդումը դեպի

հանգստայան տները, սանատորիաներն ու եքսկուրսիաները:

ՀԱՅՐԱԿ ՅԵՐԻՑՈՍՍՐԴԻ-ՌԱԹՅՈՒ ՊԱՏՇՈՎԱԿԱՆԻ ԹԱՇԽԱԿԱՆԻ ԹՅՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղերում կոմյերիտմիությունը նույնպես ուշագրությանը պեաք ե պաշտպանի բատրակ յերիտասարդության շահերը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բատրակությունը նշանակալիորեն կրծատվել ե: Բատրակներից շատերը հող սասցան ու դարձան տնտեսատերեր:

Ներկայումս բատրակության թիվը ավելացել ե և հասել ե մոտ մեկ ու կես միլիոնի: Բատրակ լթյուն են անում ավելի շատ յերիտասարդ գյուղացիները: Հասակավոր գյուղացինքավորն ինքն աշխատում ե մնալ տնտեսության մեջ և յերեխաներին ե ուղարկում բատրակության:

Միլիոն ու կես բատրակներից մոտ յերկու յերրորդը 23 տարեկանից մեծ չե: Ուստի կոմյերիտմիության համար այստեղ աշխատանքի հըսկայական դաշտ ե բացվում, մանավանդ, վորբատրակ յերիտասարդության գրությունը շատ անգամ վատ ե բանվոր յերիտասարդության գրությունից:

Նախ և առաջ կոմյերիտմիությունը պետք է աշխատի, վորպեսզի բատրակները մտնեն միության մեջ։ Հիմա կոմյերիտմիության մեջ միայն 124,073 բատրակներ են հաշվում։ Դա քիչ եւ կոմյերիտմիությունը գործնականում պետք է ցույց տա լերիտասարդ բատրակներին, վոր շահավետ եւ մտնել միության մեջ։ Դա կարելի յեցույց տալ, ողնելով բատրակներին, վորպեսզի իրենց իրավունքները պաշտպանեն։ Այդ պաշտպանությունը նույն գծով է գնում, ինչպես վորանչափահաս բանվորների իրավունքների պաշտպանությունը քաղաքում, հատկապես խորհրդային տնտեսություններում վորակավորյալ գյուղատնտեսական բանվորներ պատրաստելու համար աշխատանք եւ կատարվում, սահմանվում երրոնիա (խորտնտեսություններում), առանձին գյուղացիական տնտեսությունների մեջ աշխատող բատրակ բանվորների 10% ը աշխատվում ենունպես յենթարկել բրոնիայի։ Կոմյերիտմիությունը հետևում է աշխատավճարի չափին, նայած գյուղացու տնտեսության կարողությանը։ Կոմյերիտմիությունը հետևում է, վորպեսզի աշխատանքի պայմանագիրը ճիշտ կերպով կնքվի վարձողի հետ, պաշտպանվի բատրակի աշխատանքն ու առողջությունը։

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՆԱՆՑ ՎԻՃԱԿԻ ԹԵԹԵՎԱՑՈՒՄԸ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉՊԵՍ Ե ՊԱՇՑՊԱՆՈՒՄ ԵՐՐԱՎՈՐԸ ՇԱԽԵՐԸ

Թե բաղաքում և թե գյուղում կոմյերիտմիությունը պետք է ոգնի աղջիկներին դուրս գալու ընտանեկան այն ստրկությունից, վորի մեջ մինչև հիմա գտնվում են։

Նախ և առաջ, պետք է աշխատել, վորպեսզի աղջիկները մտնեն կոմյերիտմիության մեջ, իսկ այդ գործն առայժմ վատ ե գնում։ Մինչև հիմա չամ. ԼէթեՄ հարյուր անդամից 80-ը տղաներ են, իսկ աղջիկները 20։ Պետք եւ աշխատել, վորպեսզի աղջիկները միության մեջ մտնեն։ Դրա համար հարկավոր ե միության աշխատանքները համապատասխանեցնել աղջիկների շահերին՝ կազմակերպել տուն կառավարելու խմբակներ, ոժանդակել մայրության իրավունքների պաշտպանությանը, մասուրների, մանկապարտեզների, հասարակական ճաշարանների բացմանը։ Միայն այն բջիջը կարող է լավ համարվել, վորի մեջ աղջիկներ շատ կան, վորի մեջ աղջիկներն աշխատում են տղաներին հավասար, կարողանում են պաշտպանել իրենց իրավունք-

ները, ստեղծում են հասարակական նոր և տողջ կենցագի Դրա հետ մեկտեղ կոմյերիալիությունը պետք է հոգա, վորպեսզի աղջիկները մտնեն դպրոց, ընտրվեն խորհուրդներում, գյուղ-փոխոգկոմիներում, զանազան կոոպերատիվների վարչություններում։ Յերբ աղջիկը նման աշխատանքի յե անցնում, կազմակերպությունը պետք է ոգնի նրան։ Այսպիսով, կոմյերիալիությունն իր աշխատանքի մեջ ավելի մեծ քանակությամբ յերիտասարդություն ե քաշում, գործով ցույց ե տալիս, վոր նա պաշտպանում ե աշխատավորության ամենից մոռացված, ամենից հետամնաց մասերին։

Կոմյերիտամիությունն իր գոյության առաջին որերից այդ աշխատանքը կատարում ե Բանվոր ու բարորակ յերիտասարդության շահերի պաշտպանությանը Խորհրդավիճ իշխանությունը մեծ ուշադրություն ե դարձնում։ Հենց վոր պրոլետարիատն իշխանությունն իր ձեռքը վերցրեց, առաջին գեկրեաներից մեկն եր աշխատանքի պաշտպանության վերաբերյալ գեկրետը, ուր անչափահասներին վերաբերող մի քանի կետեր կան։

Խորհրդավիճ իշխանության առաջին տարին կոմյերիտամիության այդ աշխատանքը, վոր

կոչվում եր տնտեսական, ուղղված եր աշխատանքի պաշտպանության վերաբերյալ միջոցները կյանքում կիրառելուն, 4 և 6 ժամյա բանվորական որվա հաստատմանը և այն։

Քաղաքացիական կոիվը հնարավորություն չտվեց լայն կերպով ծավալել արդ աշխատանքը։

Քաղաքացիական կոիվներից հետո, նոր տրնտեսական քաղաքականություն կիրառելու հետ սկսում ե ուժեղ կերպով ծավալվել տնտեսական աշխատանքը։

Կոմյերիտամիության գլխավոր խնդիրն եր արդ ժամանակ բանվոր յերիտասարդությանը պահել արտադրության մեջ, իսկ նոր տնտեսական քաղաքականության տարիներին կոմյերիտամիության աշխատանքն ուժեղացավ նաև բարակության մեջ։

1923 թվից սկսում ե տնտեսական վերելք, վորն առաջ բերեց վորակավորյալ բանվորների պահանջ։ Կոմյերիտամիությունը հերթի դրեց գործարանային-ֆաբրիկային աշկերտության կազմակերպումը։ 1922 թ. սկզբին սկսում ե գործաբարիկային դպրոցների արագ աճումը։ 1922 թվի վետրվարին կար 440 դպրոց, 1923 թվի վետրվարին արդեն 748։

Նույնպես աճում են գյուղացիական յերի-

տասարդության դպրոցները։ Այդ դպրոցները պետք ե պատրաստեն կուլտուրական գյուղացի, հասարակագետ, վոր անտեսությունը վարում ե գիտության նորագույն տվյալների համաձայն։ Գյուղացիական յերիտասարդական դպրոցներում պետք ե պարապեն չքավոր ու միջակ գյուղացու յերիտասարդ տղերքը։

Կոմյերիտմիությունը պետք ե ուշադրությամբ նայի, վորպեսզի գյուղյերիտ։ Դպրոցներում կուլակի վորդիներ չնկնեն։

Այդ դպրոցներից դեռ քիչ են բացվել, 600-ից մի քիչ ավել, չհաշված Ռւկրանան, ուր կա մոտ 500 հատուկ տիպի գյուղյերիտ։ Դպրոց, այսպիսով, ԽՍՀՄ մեջ կա մոտ 1000 գյուղյերիտ։ Դըպրոց։ Բացի այդ, գյուղացիական յերիտասարդությունը գյուղատնտեսական խմբակներում, վորոնց թիվը միայն ՌԽՍՖՀ մեջ հասնում ե մինչև 10,000-ի, կարող ե պատրաստվել կուլտուրական անտեսություն վարելուն։ Բացի այդ կոմյերիտմիությունը դիտում ե, վորպեսզի կազմակերպին գյուղացիական յերեկոյան դասընթացքներ, գյուղատնտեսական արհետպրոցներ, վորտեղ բաժանմունքներ են ստեղծվում գյուղացիական յերիտասարդությունից տրակտորիստներ պատ-

րաստելու համար (մեխանիկներ և այլն), նույնպես հատուկ դասընթացքներ այդ նպատակով։

Մի քանի տեղերում, որինակ, Մոսկվայի նահանգի Եկրգիեվսկի գավառում, գյուղացիական յերիտասարդության համար բացված ե արհեստագիտական արհեստանոցներ՝ կապված տնայնագործական արտադրության հետ։

Բացի այդ, գյուղացիական յերիտասարդության համաշխանական բանֆակներում, բարձրագույն դըպրոցներում տեղեր են հատկացվում։

Որինակ 1924—25 ուսումնական տարում բանֆակներում ընդունվել են 11,516 հոգի, այսինքն բանֆակներում սովորողների ընդհանուր կազմի $29^0/_{\circ}$ ։ 1925—26 թվին 11,800, վորն արդեն բանֆակցիների $40^0/_{\circ}$ ն ե կազմում։ Գյուղատնտեսական տեխնիկումներում ընդունված ե $52,9^0/_{\circ}$ գյուղացի, իսկ մնացած տեխնիկումներում $39^0/_{\circ}$ ։ Գյուղատնտեսական բարձրագույն դպրոցներում $42^0/_{\circ}$, իսկ ուրիշ բարձրագույն դպրոցներում $28^0/_{\circ}$ ։

ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՄԻԱՅՆԱԿԱՆ ՄԻԱՅՆԱԿԱՆ

Կոմյերիտմիությունը, բանվորազլուղացիական յերիտասարդության շահերի պաշտպան լինելով մեկտեղ, յերբեք չի մոռանում, վոր նա

աշխատում ե Խորհրդային Հանրապետության մեջ,
ուր հենց նույն բանվորագլուղացիական յերի-
տասարդության շահերի պաշտպանության հա-
մար կանգնած են խորհրդային իշխանությունն
ու արհմիությունները:

Կոմյերիտմիության գլխավոր նշանակու-
թյունը նրանումն ե, վոր նա շարունակաբար
ուսումնասիրում ե բանվորագլուղացիական յե-
րիտասարդության գրությունն ու պահանջները,
դրանք փոխադրում ե արհմիություններում ու
խորհրդային իշխանության մարմիններում:

Հ Ա Ր Ց Ե՞Ր

1. Ինչու կոմյերիտմիությունը կարելի յե-
կոչել բանվորագլուղացիական յերիտասարդու-
թյան շահերի պաշտպան:

2. Ի՞նչ խնդիրներ են դրված կոմյերիտ-
միության առաջ բանվոր յերիտասարդության
շահերի պաշտպանության գործում:

3. Ի՞նչ միջոցներ ե ձեռք առնում կոմյե-
րիտմիությունը բատրակ յերիտասարդության
շահերի պաշտպանության ասպարիզում:

4. Ի՞նչն շանակություն ունեն յերիտասար-
դության համար գործ-ֆարբիկային աշկերտու-
թյան և գլուղացիական յերիտասարդության
գպրոցները:

5. Կոմյերիտմիությունն ինչպես պետք է
ոգնի աղջիկներին:

6. Կարող ե կոմյերիտմիությունն ինքնու-
րույն կերպով պաշտպանել բանվորագլուղա-
ցիական յերիտասարդության շահերը:

5. ԿՈՄՅԵՐԻՏԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՒՍ ՄԱՍՆԱԿԻՑ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ Դ.Ֆ.Ա.Ր Մ.ՆՑՈՒՄՆ

Քաղաքացիական կոփլսերից պրոլետարիատը
հաղթանակով դուրս յեկավ, բայց նրա առաջ
կանգնած ե ուրիշ, ավելի դժվար ինդիք՝ յեր-
կրի տնտեսությունը վերաշինել սոցիալիստական
հիմունքներով, հասնել նրան, վորպեսզի չինի
չքափորություն և աղքատություն:

Այդ խնդիրը հատկապես դժվար ե նրա հա-
մար, վոր պատերազմի պատճառով ժողովրդա-
կան տնտեսությունը հսկայական չափով քայ-
քայվեց:

Ուղարկան ճակատներում հաղթանակելուց
հետո կոմմունիստական կուսակցությունն ու Խոր-
հրդային իշխանությունը կոիվ մղեցին ավերա-
ծության դեմ, ուժեղացրին աշխատանքալին ճա-
կատը:

Կոմյերիտականները նույնպես մեծ մասնակցություն ցույց տվին աշխատանքային ճակատի պայքարում։ Բանվոր յերիտասարդությունն իր ուժերը լարեց գործարաններում, արհեստանոցներում աշխատելիս։ Նա աշխատում եր վոչ մի բոպե չզբոնել, ձեռներ ծալած չնստել։ Բացի այդ, յերիտասարդությունը սի քանի ժամ մնում եր արտաժամյա աշխատանք կատարելու համար։

Այն ժամանակ հատկապես շատ չարչարվեցին ամբողջապես քայլքարգած տրանսպորտը վոտքի հանելու համար։ Յերիտասարդությունն արտաժամյա աշխատանքների միջոցով բաց թողեց մի քանի տասնյակ վերանորոգված շոգեմեքենաներ ու վագոններ։

Այդ ժամանակներում Վլադիմիր Իլլիչը լույս ընծայեց «Մեծ կարկատաններ» գրքունկը, վորտեղ բանվորներին ու գյուղացիներին կոչ եր անում իրենց ուժերը լարել ավերածության դեմ պայքարելու համար ու խորհուրդ եր տալիս «շաբաթորյակներ» կազմակերպել։ Կոմյերիտականներն առաջին շարքերումն եյին գնում շաբաթորյակների կազմակերպման համար։ Յուրաքանչյուր տոնին, իսկ հաճախ նաև լի որերին, հարյուր հազարավոր յերիտասարդներ, կոմյերի-

տականներ կարմիր դրոշակներով ուղեվորվում եյին համերաշխ աշխատանքի։

Այն ժամանակ բոլորն զգում ու հասկանում եյին, վոր աշխատանքային ճակատը քիչ կարեվոր չե, քան ուղմականը։

Հենց այդ ժամանակաշրջանում կոմյերիտամիությունը սեղմ կերպով մոտեցավ սոցիալիտական շինարարության մեջ մասնակցություն ունենալու խնդրին։ III համառուսական համագումարում ընդունված ծրագրում ասված ե.

«Համ. IկՑԵՄ ակտիվ կերպով մասնակցում ե կոմմունիստական կուսակցության ու Խորհրդարանին իշխանության գործունեյությանը, վորը թափվում ե սոցիալիստական շինարարության գործի վրա»։

Վ. Ի. Լենինը, կոմյերիտամիության համառուսական III համագումարում դիմելով կոմյերիտականներին ասում եր՝ «Դուք պետք ե կոմմունիստական հասարարության միլիոնավոր շինարարների մեջ լինեք առաջին շինարարները»։

Դրան ի պատասխան համառուսական III համագումարը հետևյալ վորոշումն ընդունեց՝

«Մուսասատանի բանվորագյուղական յերիտասարդությունը հանձինս իր միության պարզ կերպով դիտակցում ե սոցիալիզմի տնտեսական

ու կուլոռւրական հսկայական դժվարությունները՝ քայքայված անտեսական հիմքերի վրա, մանր բուրժուական յերկրում ու պատրաստ ե իր բոլոր ուժերը լարել աշխատանքային ճակատում սնութեսական հաղթանակներ տանելու համար»:

III համագումարից կես տարի անց, վորն յեղավ 1920 թվին, սկսեց նոր տնտեսական քաղաքականության շրջանը, վորն սկզբում հիվանդագին կերպով անդրադարձավ կոմյերիտմիության վրա:

Կոմյերիտմիությունը չկարողացավ մեկից հարմարվել նոր պայմաններին: Խորհրդային իշխանության մարմիններն ու տնտեսական կազմակերպությունները վերակազմվում ու հարմարվում ելին նոր պայմաններին, և այդ պատճառով կոմյերիտմիության մասնակցությունը սոցիալիստական շինարարության մեջ այդ ժամանակ պակասեց:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑՆՑԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՎ. ~ ՅՈՒՄԸ

1923թ. ժողովրդական տնտեսությունն սկսեց բարձրանալ: Դրա հետ մեկտեղ կոմյերիտմիությունն սկսեց ուղղվել, աճել և ամրանալ: Նրա առաջ նոր, ավելի բարդ խնդիրներ կանգնեցին:

ԽՍՀՄ ժողովրդական տնտեսությունը յերկու հիմնական մասի յերաժանվում՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության: Կուսակցության ու Խորհրդային իշխանության առաջինդիր զբվեց՝ բարելավել, ամեն կերպ զարգացնել ժողովրդական տնտեսության այդ յերկու մասերը: Դրա մասին Վ. Ի. Լենինն այսպես եր ասում:

«Մենք գիտենք, վոր կոմմունիստական հասարակությունն չի կարելի կառուցել, յեթե չվերականգնենք արդյունաբերությունն ու հողագործությունը, ըստ վորում դրանք չպիտի վերականգնել հնի համաձայն: Դրանք պետք ե վերականգնել ժամանակակից, գիտության վերջին խոսքի կառուցվածքի հիմունքներով»:

Այսպիսով, կոմյերիտմիությունը պետք է մասնակցություն ունենա յերկրի ժողովրդական տնտեսությունը նոր ձևով կազմակերպելու գործին:

«Դրա համար, Լենինն ասում եր, — ամեն որ, ուզած քաղաքում, ուզած գյուղում յերիտասարդությունը պետք ե ընդհանուր աշխատանքի այս կամ այն խնդիրը լուծի, թող լինի ամենափոքը, թող լինի ամենահասարակը»:

Յերիտասարդությունը գործարաններում ու

Փաբրիկաներում պետք է բարձրացնի աշխատանքի արտադրողականությունը: Կոմյերիտականները շահագուգոված են, վորպես զի դործարանը վարքան կարելի յե շատ, լավ և աժան արտադրի, վորպես զի այդ ապրանքները տրվի գյուղացիությանը: Յերիտասարդությունը զյուղում պետք է տնտեսությունը վարելու լավագույն հնարներ ձեռք բերի (*յեռագաշտյանից բազմադաշտյանի անցնել, մեքենաներ մուծել*), հացահատիկի և տեխնիքական մշակույթների լավագույն տեսակները բուսցնի (վուշ, կանեփ, բամբակ): Յուրաքանչյուր կոմյերիտականի պարտականությունն է թե քաղաքում և թե գյուղում աշխատանք կատարել արտադրության բարելավման աստպարհում: Կոմյերիտականներն ամեն տեղ պիտի լինեն որինակելի, կարգապահ ու գիտակից աշխատողներ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

1925 թվին արդյունաբերությունը բուսն կերպով աճեց ու մեծ թոփչք գործեց, հասնելով նախապատերազմյան արտադրության 70% -ին: Դա տեղի չունեցավ առանց կոմյերիտմիության ու բանվոր յերիտասարդության մասնակցությանը: Հիմա հերթի յե դրված — աճել մինչև

նախապատերազմյան մակարդակը և անցնել նըրանից:

1926 թվին արդյունաբերությունը մռացեցել է նախապատերազմյան մակարդակին, հասնելով 90% -ին, իսկ արդյունաբերության մի քանի ճյուղերն արդեն անցել են նախապատերազմյան մակարդակը: Բայց դա քիչ եւ Արդյունաբերության նախապատերազմյան մակարդակը դա միայն սոցիալիզմի ճանապարհի առաջին ասաթձանն է: Աճումն անընդհատ պետք է շարունակվի, քանի վոր աճում եւ մեր յերկը բնակչությունը, աճում եւ նրա կարիքների ըրջանակը: Գյուղն ուղղում է ավելի կուլտուրական, ավելի կուշտ ապշել: Գործարանային-ֆաբրիկային արդյունաբերության արտադրանքի սպառումը գյուղացու կողմից նշանակալիորեն ավելացել եւ համեմատած նախապատերազմյանի հետ, և նախապատերազմյան մակարդակը չի կարող մեզ համար չափ լինել: Այստեղ կոմյերիտմիությունը պետք է ավելի շատ ուժ թափի:

ԳՅՈՒՂԱՏՆԵՑՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Ժողովրդական տնտեսության մյուս մասի՝ գյուղատնեսության վերականգնումը պակաս նշանակություն չունի: Գյուղատնտեսության մեջ զբաղված ե մինչև 100 միլիոն գյուղացի (նույն

թվում հաշված և նրանց ընտանիքները): Այստեղ կազմակերպել աշխատանքը և գյուղատնտեսությունը մոտեցնել սոցիալիզմին բավականին դժվար եւ: Գյուղացիները մասնը, բաժան-բաժան արտադրողներ են: Նրանք տնտեսությունն առանձին-առանձին են վարում: Այսպիսի բաժան-բաժան տնտեսությունների թիվը ԽՍՀՄ մեջ 22,000,000 եւ:

Կոմյերիտմիության աշխատանքը գյուղում, նոր կյանքի շինարարության ասպարիզում, կայանում ե՛ մասնակցել այն աշխատանքին, վորևորհրդակին իշխանությունն անում և գյուղատնտեսության ու գյուղացիների գրագիտությունը բարձրացնելու համար:

Կոմյերիտականը, նախ և առաջ, պետք եւ բարձրացնի իր տնտեսությունը, դրդի հորը, յեթե նա հին ձեռքով ե վարում տնտեսությունը, անցնելու հողի կուլտուրական մշակությանը:

Կոմյերիտմիությունը պետք ե պրոպականդ մղի, տարածի ազրոնոմիական մասսայական ձեռնարկումները գյուղացիական բնակչության մեջ: Կոմյերիտմիության յուրաքանչյուր բջիջը պետք ե տնտեսությունը մշակույթային ու հասարակական ձեռքով վարելու որինակցույց տա՝ սերմերը յենթարկելով դաման, վերամշակման, ցա-

նելով ընկերովի ածուներ, կազմակերպելով արտելներ, մեքենայական ընկերություններ և այլն:

Բոլոր կոմյերիտականները պետք ե խմանան ամբողջ ըայոնի գյուղատնտեսության դրության առանձնահատկությունները, պետք ե հողաշինարարության, հողոգտագործման լավագույն ձեռներն ընտրեն, անձնական որինակով գյուղացիությանը դրդեն դեպի այդ ձեռքը:

Կոմյերիտմիությունը պետք ե լայն կերպով ազրոնոմիական պրոպականդա մղի գասախոսությունների, զրուցների կազմակերպման, գյուղատնտեսական մատչելի գրականություն ընթերցելու միջոցով և այլն: Գյուղատնտեսության համար մեծ դեր են խաղում գյուղատնտեսական խմբակները, վորոնք կազմակերպվում են խըրճիթ-ընթերցարաններին կից, վորոնց մեջ գլխավորապես յերիտասարդությունն ե աշխատանք կատարում: Խմբակում ստացած ազրոնոմիական գիտելիքներն ամրապնդվում են գործնական աշխատանքների միջոցով, սկզբում պարզ, ինչպես որինակ, սերմերի զատում, կերամանների, տաքուկ ախոռների շինում և այլն:

Գյուղատնտեսության բարձրացման, բարեւագման վերաբերյալ այդ բոլոր աշխատանքները

կոմիերիտմիությունը կատարում ե գյուղատրնստեմների, ուսուցիչների և գյուղի կուլտուրական մյուս ուժերի սերտ համագործակցությամբ:

**ՄԱՍՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՌՊԵՐԱՑԻՎ, ՇԽՎԱՐԱ-
ՐՈՒԹՅԱՆԸ**

Գյուղատնտեսության զարգացման համար յերկու ճանապարհ կա:

Կապիտալիստական ճանապարհը, վորին ուղեկցելու, յե վոմանց հարստացումն ու մյուսների քարտայումը, մյուս ճանապարհը սոցիալիստականն ե, յերբ յերկրի հարստացմամբ նրա ամբողջ բնակչությունը լավ կապրի, յերբ յուրաքանչյուր աշխատող մարդը կապահովվի անհրաժեշտ միջոցներով։ Մեր պայմաններում առանց կոռպերացիայի չի կարելի հասնել դրան։

ԱԼԵՔՍԵԻ ԻՎԱՆՈՎԻՉ ՌԻԿՈՎԸ ասում ե՝

«Կոռպերացիան պետք ելինի գյուղացիության այն կազմակերպությունը, վորի միջոցով գյուղացիները վերականգնում են ու բարելավում իրենց տնտեսությունն ու կը գան դեպի սոցիալիզմը»։

Գյուղացիների, հատկապես չքավորների առաջ ինսդիր ե դրված. — իրենց գյուղերում կազմակերպել գյուղատնտեսական, կոլեկտիվ տըն-

տեսություններ, մեքենայական և ուրիշ զանազան ընկերություններ, տնախագործական արտելներ և այլն։

Գյուղացիների առաջ նույնպես կանգնած ե իրենց գյուղերում կոռպերատիվ խանութներ, պահեստներ կազմակերպելու խնդիրը, վորտեղ քաղաքից, դարձյալ կոռպերացիայի միջոցով, կըստացվեն արդյունաբերական իրեր։ Դա բանվորներին ու գյուղացիներին կողնի առանց միջնորդների, գնորդների և առեւրականների կառավարվել։ Դա կողնի ճիշտ կերպով իմանալ, թե ի՞նչ ե արտադրում գյուղը, թե ի՞նչ ե արտադրում քաղաքն ու վորքան բան և հարկավոր գյուղին քաղաքից ու քաղաքին գյուղից։

Այսպիսի կարգը կը լինի սոցիալիստական շինարարության սկիզբը։

Վ. Ի. Ռիչը ասում եր, վոր «արտադրության միջոցների վրա հանրային սեփհականություն հաստատելու, բուրժուազիայի դեմ պըռլետարական դասակարգային հաղթանակ տանելու ժամանակ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար անհրաժեշտ ու բավարար պայմանն ե բնակչության կոռպերացումը»։

Կոմյերիտմիությունը, վորպես սոցիալիստական շինարարության մասնակից, աշխատանք

Ե կատարում կոռպերատիվ շինարարության ասպարիզում։ Ինչ ե անում նա կոռպերացիային ոգնելու համար։

Նախ և առաջ կոմյերիտմիությունը յերիտասարդությանը զրափում ե անդամագրվելու կոռպերացիային, այնտեղ ուղարկում ե իր ներկայացուցիչներին, նրան տալիս ե կոմմունիստական ազնիվ ուժեր և աշխատակիցներ։ Իինելով կոռպերատիվի գործունյա անդամ, կոմյերիտականները հետեւում են, վորպեսզի կոռպերատիվը դեպի անկում չգնա, չքայքայվի, վորպեսզի նա ավելի աժամն ծախի մասնավոր առևտրականից և այդ միջոցով գյուղից դուրս գցվի կուլակ—խանութպանը։

Կոմյերիտմիության բջիջը կատարում ե միշտը վոչ մեծ գործեր կոռպերատիվին ոգնելու համար, որինակ՝ ողնում ե անդամավճարների գանձմանը, անդամներին ժողովների մասին իմաց տալուն, կոոպերատիվի անդամների մեջ կուլտուրավորական աշխատանք կատարելուն։

Կոմյերիտմիության այդ բոլոր աշխատանքը պիտի ոժանդակի կոռպերացիայի աճմանը, իսկ կոռպերացիայի աճումը նշանակում ե մոտենալ սոցիալիզմին։

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՐՃՐԴՅԱՆ ՇԽԱՏՐՎՈՒԹՅԱՆԸ

Մասնակցություն ունենալով գյուղատրնտեսության բարձրացմանը, կոռպերատիվ շինարարությանը, գյուղը սոցիալիստական միաբանության վրա հիմնելու գործին՝ կոմյերիտմիությունը պետք ե հիշի, վոր նա այդ գործում ոգնում ե կուսակցությանն ու Խորհրդային իշխանությանը։

Խորհուրդները, հատկապես գյուղում, հասարակական կյանքի կենտրոնն են հանդիսանում, նրանք պետք ե լինեն ինչպես ասված ե համամիութենական համագումարի վորոշումների մեջ, «Կուլտուրական-տնտեսական շինարարության գեկավարը»։ Կոմյերիտմիության բջիջները գյուղում մասնակցելով սոցիալիստական շինարարությանը, լրացնում են խորհուրդների աշխատանքը, ոգնում են նրանց։

Բայց իրենք խորհուրդները կուլտուրական, տնտեսական շինարարի դերը կարող են կատարել միայն այն դեպքում, յերբ շինարարության գործի մեջ կը քաշվեն բանվորագյուղացիական լայն մասսանները։ Մասսաներին խորհուրդների գործունեյության մեջ քաշելու այդ աշխատանքում կոմյերիտմիությունը պետք ե լինի առա-

ջին ոգնականներից մեկը։ Կոմյերիտմիությունը մասնակցություն ե ցույց տալիս Խորհրդային իշխանությունը տեղերում ամրացնելու, խորհուրդների աշխատանքում նկատվող բացերն ուղղելու աշխատանքին։

Կոմյերիտմիությունը հանդիսանում ե զանագան հասարակական գործերի սկսողը, ինչպես որինակ՝ կամուրջների նորոգումը, ճահիճների չորացումը, խրճիթ-ընթերցարանների ստեղծումը, գպրոցի նորոգումը, հրդեհաշեջ խմբերի և հասարակական հրդեհաշեջ շինությունների ստեղծումը և այլն։

ԼկթեՄ բջիջը սրատեսորեն հետևում ե, թե ի՞նչ կարելի յե անել գյուղում ամբողջ բջիջի հետ միասին, և արձականքում ե հասարակական կարիքներին։

Բջիջի ուշադրությունը հատկապես պետք ե դարձվի գյուղական չքավորության ու բատրակության շահերի պաշտպանության վրա։ Դրանով բջիջը բոլոր գյուղացիներին կը հարկադրի կոմյերիտմիության վրա նայել վորպես լուրջ կազմակերպության։

Դեռևս 14-րդ կուսհամագումարը հաշվի առեց կոմյերիտմիության խոշոր նշանակությունն

արդ գործում և նրա վորոշումների մեջ կա հետևյալը՝

«Միությունը պետք ե գառնա ակտիվ ուղեցույցը Խորհրդային իշխանության ամբողջ հասարակական քաղաքական ու կուլտուրական ըսկումների՝ պայքարի հողամշակման նոր ձևերի, գլխովին գրագիտության, տեխնիքական բարելավումների համար»։

Խորհուրդների աշխատանքում մասնակցելու համար, կոմյերիտմիության բջիջներն իրենց անդամներին անց են կացնում նրանց մեջ։ Որինակ՝ վերջին վերընտրական կամպանիային խորհուրդներում անցել են 11,000 կոմյերիտականներ։

Բայց առաջ քաշելով իր ներկայացուցիչներին, կոմյերիտմիությունը չի փաթաթում, չի ստիպում նրանց ընտրել։ Իսկ յեթե կոմյերիտմիության ներկայացուցիչներն ընտրվում են խորհրդում, նրանք պիտի լինեն գործունյա, որինակելի աշխատողներ, նրանք պետք ե նվաճեն գյուղացիական մասսաների վստահությունը և արդարացնեն այդ վստահությունը։

Կոմյերիտմիությունը մասնակցություն ունենալով խորհուրդների աշխատացման աշխատանքին, պետք ե հրաժարվի հրամանատարարելուց, լե-

ուանդ թափի, վորպեսզի խորհուրդների շուրջ հավաքի անկուսակցական գյուղացիության հոծ մասսա: Կոմյերիտմիությունը պետք է կուսակցությանը ոգնի չքավորի և միջակի միությունն ամրացնելու և կուլակին հեռացնելու համար, վորը հաճախ և փորձում սողոսկել խորհուրդներում, յենթարկել, գյուղն իր հետեից տանել:

Խորհրդային պետական շինարարության համաձայն մեր յերկրում յերիտասարդությանը խոշոր իրավունքներ են տրված: Արդեն 18 տարեկան յերիտասարդն իրավուրք ունի ընտրել ու ընտրվել խորհուրդներում: Այդպիսի իրավունք չունի յերիտասարդությունը բուրժուական վոչ մի յերկրում:

Յերիտասարդները, հատկապես կոմյերիտականները, պետք է լրիվ կերպով ոգուագործեն և արդարացնեն այդ իրավունքները:

ԻՆՉ ԿԱՐԴԱԼ

1. Կասիմենկո «Կոմյերիտմիությունը գյուղում»

6. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՄԵՍ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ԴՐՈՑ

ԻՆՉ Ե «ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ԴՊՐՈՑ»

Արդեն մի քանի պատասխաններ տվինք «ի՞նչ է կոմյերիտմիություն»-ը հարցին, մենք ամուր կերպով հիշենք, վոր կոմյերիտմիությունը բանվորա-գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպությունն է: Կոմյերիտմիությունը Խորհրդային Հանրապետության ու բանվորա-գյուղացիական յերիտասարդության շահերի պաշտպանն է: Կոմյերիտմիությունը մասնակցում է սոցիալիստական շինարարությանը:

Հիմա մենք մոտեցանք կոմյերիտմիության ելի մի ուրիշ բնորոշմանը: Կոմյերիտմիությունը հաճախ կոչում են «կոմմունիզմի դպրոց», ի՞նչ են նշանակում այդ խոսքերը—«կոմմունիզմի դըպրոց»:

Պարզ է, վոր «կոմմունիզմի դպրոց»-ը չըպետք է համականալ վորպես սենյակ, ուր կան զրասեղաններ, քարտեզներ, զրատախտակներ: «Կոմմունիզմի դպրոց» խոսքը այստեղ ուրիշ մըտքով է գործածվում:

Վ. Ի. Լենինն արհեստակցական միություններին «կոմմունիզմի դպրոց» եր անվանում: Հե-

տո, մեկնաբանելով արհմիությունների խնդիրները, Վ. Իլիչն ասում եր՝

«Արհեստակցական միությունները պետք են գիտենան, վոր բարձր խնդիրներ են դրված իրենց առաջ՝ մասսաներին վոչ՝ թե գրքերով, դասախոսություններով, միտինգներով սովորեցնել կառավարչության գործին, սովորեցնել փորձնվ, այնպես անել, վորպեսզի առաջավոր խավի տեղ, վորին պըոլետարիատը տվել ե իր միջից, վորին նա դրել ե հրամանատարություն անելու և կազմակերպելու, հանդես գան բանվորների նորանոր խավեր, վորպեսզի մի գործչի տեղ այդ նոր խավից ելի տասը գա»:

Ահա ինչպես եր հասկանում ու բացատրում ընկ. Լենինը կոմմունիզմի մյուս դպրոցը — արհմիությունները: Յեվ յեթե կոմյերիամիութունը նույնպես անվանվում ե կոմմունիզմի դպրոց, ապա դա չի նշանակում, վոր ուսումը պետք ե բացառապես դասախոսությունների, միտինգների, խմբակների, գրքերի միջոցով ձեռք բերվի: Վ. Իլիչը այդ մասին այսպես եր ասում.

«Առաջին հայացքից կարող ե յերեալ, վոր կոմմունիզմն ուսանել — դա նշանակում ե յուրացնել այն գիտությունների գումարը, վոր բացարված ե կոմմունիստական դասագրքերում,

բրոշյուրներում և աշխատություններում: Բայց կոմմունիզմն ուսանելու այսպիսի բնորոշումը կը լիներ խիստ կոպիտ և անբավարար: Յեթե կոմմունիզմն ուսանելը պարփակվեր միայն յուրացնելու, ինչ վոր բացատրված ե կոմմունիստական աշխատություններում, գրքերում ու բրոշյուրներում, ապա բավականին հեշտ կերպով մենք կը կարողանայինք ստանալ կոմմունիստական դպիրներ ու սնապարձնեք, իսկ դա ամեն բայլափոխում մեզ վնաս ու կորուստ կը բերեր, քանի վոր մարդիկ, վորոնք սովորելով ու կարգալով այն, ինչ վոր բացատրված ե կոմմունիստական գրքերում ու բրոշյուրներում, գուրս կը գար, վոր չպիտի կարողանային բոլոր այդ գիտությունները միացնել և չպիտի կարողանային այնպես գործել, ինչպես դա իսկապես պահանջում է կոմմունիզմը»:

Ուրեմն ինչպես պետք ե կոմյերիամիության մեջ կառուցել ուսումը, վորպեսզի ստացվի իսկական «կոմմունիզմի գպրոց»:

Պետք ե գրքի ուսուցումը լրացնել պայքարով և աշխատանքով: Այդ մասին նույնպես ասում եր Լենինը՝

«Յերիտասարդ սերունդը կարող ե ուսանել կոմմունիզմը, միայն իր ուսման, դաստիարակու-

թյան ու կրթության յուրաքանչյուր քայլը կապելով պրոլետարիատի և աշխատավորության անընդհատ պալքարին՝ ուղղված շահագործող հին հասարակության դեմ»:

Յեվ Ելի՛

«Առանց աշխատանքի, առանց պայքարի գրքի գիտությունը վոչինչ չարժի»:

ԱՐԴՅՈՒՆ ԿՈՄՅԵՐԻՑՄԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՇՏ Ե ՅԵՎԵԼ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ԴՊՐՈՑ

Այսպիսով, կոմյերիտմիության գլխավոր առանձնահատկությունները, վորպես կոմունիզմի դպրոցի, կայանում են նրանում, վոր նրա մեջ ուսուցումը միացվում է կովի և շինարարակության հետ:

«Իսկ գիտության ու գործնականի միացումը, — ինչպես ասում են ընկ. Բուխարինը, — լենինիզմի գլխավոր առանձնահատկություններից մեկն ե: Բայց, — ասում են նա, կոմյերիտմիության VII համագումարին, — մեր կազմակերպության մեջ հավասարակշռությունը մշտապես տատանվում է գիտության ու գործնականի միջև, մերթ իսկու կերպով ուսուցման ու կուլտուրականության կողմ, մերթ, ընդհակառակն—ակտիվ, գործունյա քաղաքական կյանքի կողմ, առանց գիտության և ուսուցման»:

Քաղաքացիական կոփմսերի տարիներին կոմյերիտմիությունն ավելի շատ դաստիարակվում եր կոփմսերի մեջ, քան թե գրքերով, Հեղափոխական ճակատները, մոբիլիզացիաները, շաբաթորյակները և այլն այս բոլորը կոմյերիտականին խանգարում ելին նստել գրքի մոտ:

Կոմյերիտմիության գործունեյության այդ շարքը կարելի յե անվանել զինվորական ժամանակաշրջան:

Քաղաքացիական կոփմսերը վերջանալուց հետո, յերբ հարկ յեղավ հրացանը մի կողմ գնել, կոմյերիտականները ձգվեցին դեպի գիրքը: Դեպի ուսում ձգվելը որն որին ուժեղանում եր: Կոմյերիտականները հասկացան, վոր առանց գիտության չի կարելի աշխատել: 1921—1922 և մյուս տարիներին կարելի յեր տեսնել, թե ինչպես կոմյերիտականները հարյուրներով, հաղարներով ձգվում ելին դեպի յերեկոյան դասընթացները, բանֆակները, կուսխորհրդային դպարոցները և բարձրագույն դպրոցները և այլն:

Այդ շրջանը կարելի յե անվանել ուսումնական ժամանակաշրջան՝ ի տարբերություն այն շրջանի, վորի մեջ մենք մտել ենք և աշխատում ենք հիմա:

Հիմակվա ժամանակաշրջանը կոմյերիտմիու-

թյան «կյանք» ում կարելի յէ անվանել ուսումնական—շինարարական ժամանակաշըրջան։ Սանշանակում ե, զոր կոմյերիտմիությունն իր անդամների ուսուցումը կազմակերպում ե բավականաչափ լավ, և բացի այդ, նա մասնակցություն ե ցուց տալիս տնտեսական ու խորհրդակին շինարարությանը։ Ուսուցումը հաստատվում ե գործնականով։ Գանըվելով իրենց միության մեջ, կոմյերիտականները, ինչպես ասված ե VI համագումարի մանիֆեստում, սովորելով կառուցում են ու կառուցելով սովորում են։ Կոմյերիտմիությունը դառնում ե կոմունիզմի խսկական դպրոց, կատարում ե այն, ինչի մասին ասել ե Լենինը։

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՈՒԽՈՒՑՈՒՄԸ

Քաղաքում, կոմյերիտմիությունը, նախ և առաջ, պարզում ե իր քաղաքական անզրագետների թիվը, զորոշում ե բոլոր կոմյերիտականների զարգացման մակարդակը, բաժանում ե նրանց 3 խմբերի՝ տուաջին, յերկրորդ և յերրորդ։ Ամենից ավելի պատրաստված կոմյերիտականները մանում են յերրորդ խմբում ու սովորում են կուսակցության քաղզրագիտության դպրոցներում։ Առաջին և յերկրորդ խմբերի կոմյերի-

տականները աշխատում են կոմյերիտմիության քաղզրագիտական դպրոցներում։

Դյուղում կոմյերիտականների քաղաքական կլիթությունը կուսակցության հետ միասին եւ կոմյերիտականները տեղափորփում են կուսակցական շրջիկ-դպրոցներում։ Շրջիկ-դպրոցների կողմից չնդզրկված կոմյերիտականները քաղընթերցման միջոցով բարձրացնում են իրենց քաղաքական կրթությունը։ Վերջացնելուց հետո կոմյերիտականները մանում են ինքնազարգացման խմբակներում։ Բացի քաղընթերցումներից, կոմյերիտմիության գյուղական կազմակերպություններում, կազմակերպվում են գյուղական քաղզրագիտական դպրոցներ, ղեկավարի ներկայության դեպքում։

Թե կուսակցական և թե կոմյերիտմիության բոլոր դպրոցների, խմբակների համար, ուր աշխատում են կոմյերիտականները, կան հատուկ ծրագիրներ ու նրանց վերաբերյալ գրքեր։

Կոմյերիտականը չպետք ե հետ մնա այժմյա քաղաքական, հաստրակական կյանքից։ Այդ պատճառով խմբակներն ու դպրոցները հետևում են և արձականքում քաղաքական ղեպքերին՝ գործնական հանձնարարությունների, ներկայիս

հարցերի լուրջ զրույցներ կաղմակերպելու, հետազոտման միջոցով և այն:

Այդ աշխատանքով դաստիարակչական գործունեյությունը չի վերջանում: Կոմյերիտմիությունն ագիտացիոն խոշոր աշխատանք է կատարում: Կոմյերիտմիությունն իր ու ամբողջ յերիտասարդության միջից վերացնում է անդրագիտությունը: Նա պետք է նույնպես ոգնի խրճիթընթերցարանների, ակումբների, ժողովրդական տների կուլտ-լուսավորական աշխատանքին:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչ է նշանակում մասսաններին սովորեցնել կառավարելու գործին:

2. Կարելի՞ յե միայն գրքերով սովորել սոցիալիզմ կառուցել:

3. Բնկ. Լենինն ի՞նչն էր կոչում «կոմմունիզմի գոլոց»:

4. Կոմյերիտմիության անդամներն ի՞նչ պետք է անեն գործնականապես:

5. Քաղաքի կոմյերիտականները ի՞նչպիսի դպրոցներում կարող են լրացնել իրենց քաղաքական կրթությունը:

6. Ի՞նչպես ե կաղմակերպված կոմյերիտմիության ուսուցումը դյուզում:

Ի՞նչ կԱՐԴԱՐ

Գ. Ի. Լենինի ձառը կոմյերիտմիության III համագումարում:

7. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԳՆԱԿԱՆ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆՆ Ս.ՀԽՍ.ՏՈՒՄ Ե ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵԿԱ-
ՎԱՐՈՒԹՅՈՒՄ

Կոմյերիտմիության ծրագրում ասված ե՝ «Կոմմունիստական յերիտասարդական շարժումը, վորպես ընդհանուր պրոլետարականի մասը, վորնապատակ ունի վոչչացնել կապիտալիստական աշխարհն ու կաղմակերպել սոցիալիստական հասարակություն՝ աշխատում է Համ. ԿԿ (բ) դեկավարությամբ»:

Իսկապես, հեղափոխության շինարարության մասնակցելու համար արհաժեշտ է հեղափոխական մեծ փորձ: Այդ փորձը կարելի յե ընդորինակել միայն կումմունիստական կուսակցությունից, նրա հին, կոիվսերում կոփված մարտիկներից:

Դրա համար կոմյերիտմիությունը յենթարկ-

վում ե կոմմունիստական կուսակցության ազդեցությանն ու ղեկավարությանը:

Կոմմունիստական կուսակցության ղեկավարությունը կապահովի կոմյերիտմիության աշխատանքների հաջողությանը: Կոմմունիստական կուսակցության ղեկավարությունը կոմյերիտմիությունը կը դարձնի իսկական կոմմունիզմի դպրոց:

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԻՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԽԵՎՆՈՒՐՈՒՅ-
ՆՈՒԹՅՈՒՆԸ

Բայց պետք ե իմանալ, վոր, գտնվելով կոմմունիստական կուսակցության ղեկավարության տակ, կոմյերիտմիությունը պահպանում է իր ինքնուրույնությունը:

Կոմյերիտմիության ծրագրում այսպես ե ասված՝

«Կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ ու հսկողությամբ, մասնակցելով բանվոր դասակարգի ընդհանուր պայքարին, Համ. Լիթե՛Մ հանդիսանում ե ինքնավար կազմակերպություն, այսինքն ունի ներքեւից մինչև վերև կենտրոնացած իր կազմակերպությունը (միության կողմից ընտրվող ղեկավար որդաններ), իր բջիջ-

ների բյուրոներ, գավառական, նահանգական ու կենտրոնական կոմիտեներ»:

XIII համագումարի վորոշումներում այսպիսի խոսքեր կան՝

«Համ. Լիթե՛Մ կազմակերպությունների ինքնուրույնությունը հանդիսանում է նրա աշխատանքի հիմնականը, նրա գորության անհրաժեշտ պայմանը:»

Վաղիմիր իլլիչն անհրաժեշտ եր համարում արտահայտվել յերիտասարդական կազմակերպությունների ինքնուրույնության ոգտին: Նա ասում եր՝

«Յերիտասարդական միության կազմակերպչական ինքնուրույնության կողմը պետք ե լինենք անպայման ու վոչ միայն այն պատճառով, վոր այդ ինքնուրույնությունից վախենում են ոպպորտյունիստները (սոցիալիստ-համաձայնողականներ), այլ և գործի եյության տեսակետից: Վորովինետև առանց այդ ինքնուրույնության յերիտասարդությունը չի կարող վոչ իրենից լավ սոցիալիստներ պատրաստել, վոչ պատրաստվել նրան, վորպեսզի սոցիալիզմն առաջ մղի»:

Առաջ ասացինք, վոր կոմյերիտմիությունն աշխատում ե կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ, բայց կուսակցության այդ

ղեկավարությունը, ինչպես ասված ե կուսակցության XIII համագումարի վորոշումներում, «չպետք ե կը խնամակալության և աննշան միջամտության բնույթ՝ միության կազմակերպչական, ագիտացիոն, քաղլուսվարական և ուրիշ աշխատանքի մեջ, այլ պետք ե կիրառվի միայն միության կամոնադրության ու Համ. ԼկՅԵՄ կկհրահանգների շրջանակում»:

Կոմյերիտմիության ինքնագործունելությունն ու ինքնուրունությունը կնպաստի նրան՝ վորպեսզի կոմյերիտմիությունը լինի կոմմունիզմի խոկական դպրոց։ Ինքնուրուն աշխատանքով կոմյերիտականների միջից ավելի լավ կերպով կուրս կգան ապագա կազմակերպիչներ, հասարակական, կուսակցական ու խորհրդային աշխատողներ։

Յեթե կոմյերիտականը կոմյերիտմիության բջիջի կամ բայոնական կոմիտեյի, գավկոսի լավքարտուղար ե, նա հետո կարող ե լինել կուսակցական բջիջի լավքարտուղար կամ զյուղարդի, բայոնական գործկոմի նախագահ և այլն։

Ինքնուրուն աշխատանքը կոմյերիտմիության մեջ կը սովորեցնի կոմյերիտականին ինքնուրուն աշխատանք կատարել կուսակցության մեջ։

ԿՈՄՅԵՐԻՏԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Ե ՓՈ- ԽԱՆՈՐԴ

Կոմյերիտմիությունն ունի լավ լոգունգ, վորը կարելի յե տեսնել նրա դրոշակների վրա, ակումբների և խրճիթ-ընթերցարանների պատերին՝

Փոխանորդ ընկածներին,

կովում հոգնածներին։—

Յերիտասարդ զորքն ե գալիս։

Իսկապես, յեթե միայն բոլոր խսդիրներից, վորոնք ունի կոմյերիտմիությունը, վերցնենք գլխավորը, ապա դա կլինի պատրաստելու, հին ընկերներին փոխանորդ տալու խնդիրը։ Կոմյերիտականները նորակոչ զինվորներ են կոմմունիստական կուսակցության համար։ Նրանց համար մի ճանապարհ կա, մտնել Համ. ԿԿ մեջ։ Պետք ե ասել, վոր յերիտասարդությունը Համ. ԿԿ մեջ չի կարող մտնել առանց կոմյերիտմիության զիտությանը։ Յեթե զեռ 23 տարեկան չեղած յերիտասարդը կամ աղջիկը մտադրվելին կուսակցության մեջ ընդունվել, ապա նրանց կասեցին՝ «սկզբում մտիր կոմյերիտմիության մեջ, իսկ հետո արդեն կուսակցության մեջ»։

Կոմյերիտմիությունը հազարավոր անդամ-

ներ ե արդեն ուղարկել կուսակցական ու խորհրդային աշխատանքի, հազարավոր յերիտասարդ կուսակցականներ լցըել են կուսակցության շարքերը։ Կոմյերիտականների մեջ կա 140,000 յերիտասարդ կուսակցականներ։ Բայց դա շատ չեմիլիոն ու կես կոմյերիտմիության համար։

Կոմյերիտմիության առաջ դրված ե խնդիր՝ կուսակցությանը տալ կոմյերիտականների նորանոր գնդեր, ավելացնել կուսակցական կորիզը։

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ՈԳՆԱԿԱՆ Ե

Բայց պետք ե հիշել, վոր կոմյերիտմիությունը վոչ միայն նորակոչների դպրոց ե, վոչ միայն կուսակցության պահեստն ե, այլև նրա ոգնականը։ Կոմյերիտմիությունը վոչ միայն փոխանորդ ե պատրաստում կուսակցության համար, բայց հիմա արդեն նա ոգնում ե նրան ամ ենոր յա գործնականաշխատանքում, հատկապես անկուսակցական մասսաների հետ կապվելու ասպարիզում։

Համ. ԿԿ(Ք.)ԿԿ գլխավոր քարտուղար ընկ. Ստալինը, կուսակցական համագումարներից մեկում ասաց, վոր կոմյերիտմիությունը — դա կուսակցության շարժիչ փոկերից մեկն ե, վորոնք կուսակցությանը կապում են մասսաներին։

XIII կուսակցական համագումարի բանաձևերում ասված ե.

«Կոչված լինելով կատարել պահեստի գերը, վորատեղից կուսակցությունը վերջնում ե լավագույն տարրերը՝ նոր և ավելի յերիտասարդ ուժերի մշտական հոսանքը ապահովելու համար, միաժամանակ կոմյերիտմիությունը հանդիսանում ե կուսակցության ազդեցության տարածողը բանվորագլուղացիական ավելի լայն շրջանների վրա»։

Յերբ մենք խոսում ենքնոք կոմյերիտմիության մասին, վորպես Խորհրդային հանրապետության պաշտպանի, ապա համոզվեցինք, վոր կոմյերիտմիությունը կուսակցության ոգնականն ե։ ԶԵ վոր այս ժամանակ կոմյերիտմիությունը լուծում եր միենույն խնդիրը, վորը կանգնած եր կուսակցության առաջ։ Նա ոգնեց նրան ջարդել, կազմալուծել սպիտակ գվարդիականներին, պաշտպանել խորհրդային հանրապետությունը։

Յերբ մենք խոսում ենքնոք կոմյերիտմիության մասին, վորպես սոցիալիստական շինարարության մասնակցի, նույնպես տեսանք, վոր այդ աշխատանքում կոմյերիտմիությունն իրագործում ե նույն խնդիրը, վորը դրված եր կուսակցության առաջ։

Հիմա կուսակցության առաջ կանգնած գ

արդյունաբերության ու գյուղատնտեսության, աշխատանքի արտադրողականության ու գյուղի կուլտուրական մակարդակի բարձրացման խնդիրը։ Կուսակցության արդ բոլոր խնդիրները, նույնպես և կոմյերիամիության խնդիրներն են հանդիսանում։ Նա պետք է ոգնի կուսակցությանն արդ խնդիրները լուծելու համար։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐՎՈՂ ԱՄԵՆՍՄԵՇ ՈԳ- ՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեզ առաջինը վիճակից սոցիալիզմ կառուցել։ Հարկ լեղավ սոցիալիզմ կառուցել մի այնպիսի յերկրում, ուր բնակչության մեծամասնությունը գյուղացիություն է։ Դա կատեղծի խոշոր ու լուրջ գժվարություններ։ Գյուղացիությունը միասնակ չե ըստ իր կազմի (գյուղում կան բարտակներ, չքափորներ, միջակներ, կուլակներ)։ Գյուղացիությունը ցրված է, հարցուր միլիոնանոց գյուղացիությունը ցրված է փոքրիկ գյուղերում, ագրարակներում, շեներում։ Գյուղացիությունը տեր է բաժան-բաժան, վոչ մեծ տնտեսությունների, վորոնք մարդկանց իրենց են կապում, խանգարում են տեսնել ընդհանուր շահերը։ Ահա թե ինչու, ինչպես ցույց է տվել փորձը, գյուղացիությունը չի կարող մի-

ացած դուրս գալ, չի կարող հաստատապես դիմանալ հեղափոխական պայքարին։

1905 թվին կալվածատերերի գեմ ապստամբած գյուղացիությունը հեշտությամբ կազմալուծվեց ցարական կառավարության կողմից, վորովինետև ապստամբությունները բաժան-բաժան եյին, գյուղացիությունը կալվածատերերի գեմ կովում եր, իսկ ցարի գեմ չեր գնում (զինվորները քաղաքներում գնդակահարում ելին բանվորներին, վորոնք ապստամբել եյին ինքնակալության գեմ)։ Միայն 1917 թվին, յերբ գյուղացիությունը գնաց բանվորների հետեւց, ըսկզբում հաջողվեց ըշել ցարին, իսկ հետո, կապիտալիստներին ու կալվածատերերին։

Բանվորները շատ ղեպքում նախկին գյուղացիներ են։ Բայց դրանք չունեն մանր անտեսություն, նրանք մեծ գործարաններում ու ֆաբրիկաներում միասին են աշխատում, տեսնում են ու հասկանում ինչպիսի կարգեր պետք ե հաստատել, վորպեսզի լավ ապրի ամբողջ աշխատավորությունը։ Բանվորները յերկար տարիներ իրենց հարստահարողների գեմ պայքարելիս սովորել են և այդ պայքարում կուել են հզորագույն զենք—կոմմունիստական կուսակցություն։ Կոմյերիամիության խնդիրն ե, վորպեսզի կոմ-

մունիստական կուսակցության ուժան-
վոր գասակարգի ազգեցության փոխա-
դրողը լինի գյուղում:

Մենք տեսանք, վոր Համ. ԼԿՅԵՐ անդամ-
ների մեծ մասը գյուղացիներ են, դրա համար
հատկապես կարևոր ե, վորպեսզի կազմակերպու-
թյան անդամները լավ գլուխ հանեն կուսակցու-
թյան բոլոր վորոշումներից: Այստեղից հետեւմ
ե աշխատանքի բաժանումը՝ միության կոմի-
տեները ամեն կերպ ձգտում են, վորպեսզի գոր-
ծարանի և ֆաբրիկայի կոմյերիտականներն աշ-
խատանքի դնան գյուղում: Գյուղական կոմյե-
րիտականները ամեն կերպ պետք ե ոգտագոր-
ծեն այդ կոմյերիտականների փորձը, սովորեն
նրանցից պրոլետարիատի նման աշխատել:

Կուսակցական ու բանվորական ազգեցու-
թյունը կույերիտական մասսաների վրա ուժե-
ղացնելու համար կոմյերիտմիությունը ձգտում
ե ավելացնել բանվոր յերիտասարդության ու
կուսակցականների թիվը միության մեջ: Խնչքան
բանվոր կա միության մեջ՝ մենք արդեն տե-
սանք: Կուսակցականների թիվը հետեւյան ե՝ մի-
ության անդամներից հարյուրից 91-ը կուսակ-
ցության մեջ չեն, կուսակցության անդամ ու
թեկնտեսության 9 հոգի: Դա իհարկե քիչ ե, և

միությունն աշխատում ե ավելացնել կուսակ-
ցականների թիվն իր կազմում, վորի համար լա-
վագույն ակախվիստները փոխադրվում են կու-
սակցության մեջ:

Ներկայումս կոմմունիստական կուսակցու-
թյան հիմնական խնդիրն ե յերկրի ինդուս-
տրացումը: Սա նշանակում ե, վոր մեզ հա-
մար հիմա ամենազլիսավորն ե մեծ գործարան-
ների կառուցումը, վորոնք կարողանային մեքե-
նաներ ու ապրանքներ մատակարարել: Առանց
դրան չենք կարող արագորեն բարձրացնել մեր
տնտեսությունը, առանց դրան յեղած գործա-
րաններն ու ֆաբրիկաները վատ կաշխատեն,
առանց դրան գյուղին չի կարելի տալ այնքան
գյուղատեսական մեքենաներ, տրակառներ,
վորքան հարկավոր ե: Գործարաններ կառու-
ցելու համար փող ե պետք, և պետությունը հի-
մա ձգտում ե տնտեսել յուրաքանչյուր կոպեկը,
վորպեսզի դա ծախսի արդյունաբերության ծա-
վալման վրա: Շատ գյուղացիներ դա ֆասակար
են համարում, նրանք գտնում են, վոր ավելի
շատ գյուղացիական տնտեսությանը պետք ե
ոգնել: Կոմյերիտմիությունը պետք ե գյուղում
ապացուցի, վոր ներկայումս արդյունաբերու-
թյան ամրապնդումը, նոր մեծ գործարաններ

կառուցելը հերթական խնդիր ե, վոր առանց դրան գյուղացիության համար լավ չէ լինի: Միաժամանակ կոմիերիտամիությունը պետք ե պատմի, թե ինչ ե անում Խորհրդային իշխանությունը գյուղացիական տնտեսության համար: Դրանով կոմիերիտմիությունը կը կիրառի կյանքում կոմմունիստական կուսակցության վորոշումները, կողնի՝ բանվոր գասակարգի ազդեցությունը գյուղացիության վրա տարածելու համար: Հենց գըրանումն ե կոմիերիտմիության գլխավոր ոգնությունը կուսակցության:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ կոմիերիտմիությունը պետք ե աշխատի կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ:
2. Ինչո՞ւ կուսակցությունը չպիտի խառնվի միության կազմակերպչական գործերին:
3. Ինչո՞ւ դժվար ե սոցիալիզմի կառուցումը գյուղացիական յերկրում:
4. Ինչո՞ւ բանվորները կարողանում են պայքարել աշխատավորության թշնամիների դեմ:
5. Ինչ ե յերկրի ինդուստրացումը:
6. Հարկավոր ե գյուղացիներին յերկրի ինդուստրացումը:

8. ՀԱՄԿՅԵՄ ՎՈՐՈՊԵՍ ԿՅԵՒ-Ի ԱՌԱՋԱՊԱՀ ԳՈՒՆԴ ԽՍՀՄ ԿՈՄՅԵՏՐԻ ԵՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՀԱՆԱԳՀԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մենք վերջացնում ենք այս գրքույկը: Մենք հմա բավականին լավ գիտենք, թե ինչ ե կոմիերիտմիությունը: Մենք գիտենք թե նա ինչ խոշոր նշանակություն ունի նրա մեջ ընդունվող յերիտասարդության համար: Մենք գիտենք ինչ նշանակություն ունի նա հանրապետության սոցիալիստական շինարարության համար:

Բայց հասկանալով ու հիշելով այն, ինչ վոր կարդացինք, համենայն դեպք լրիկ պատասխան չտվինք ինչ ե կոմիերիտմիությունը հարցին: Մեզանում առհասարակ շարքային կոմիերիտականները մոռանում են համամիութենական կոմյերիտմիության համաշխարհային նշանակությունը, նրա դերը համաշխարհային յերիտասարդականշարժման մեջ: Մինչդեռ, մեր կոմիերիտականները պետք ե լավ հիշեն, վոր իրենք վոչ միայն կոմիերիտմիության անդամ են, այլ և կոմմունիստական Յերիտասարդական ինտերնացիոնալի (ԿՅԵՒ-ի) անդամ:

Միաժամանակ պետք ե իմանալ, վոր ԽՍՀՄ

Լենինյան կոմյերիտմիությունը, վոչ միայն (ԿՅԵՒ-ի) լոկ մասն ե, այլ նրա առաջապահ մասը, նրա առաջապահ գունդը։ Պետք ե խմանալ, վոր ԽՍՀՄ կոմյերիտմիության համաշխարհային նշանակությունը չափազանց մեծ ե, այդ նշանակությունն աճում է հենց նրանով, վոր Համամիութենական կոմյերիտմիությունը կՅԵՒ-ի ամենամեծ գունդն ե։ Նա հաշվում ե մոտ 2 միլիոն, յերբ վոր մյուս կոմյերիտմիությունների մեջ դեռ քիչ են անդամները։

ԽՍՀՄ կոմյերիտմիության դերն ու նշանակությունը կՅԵՒ մեջ աճում է գլխավորապես նրա համար, վոր Համ. ԼԿՅԵՒ աշխատում ե միակ և ամենաառաջին սոցիալիստական հանրապետության մեջ, մի յերկրում, ուր բանվոր դաստկարգն ե գերիշխում։

ԽՆՉՊԵՍ ՌԱԵՑ ԿՈՄՅԵՐԻԵՄՄԱՆԻԹ-ԸՆ Ռ.ԶԴԻԵ- ՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՏԵ-Ի ՄԵԶ

Մենք այստեղ կը հետեւնք, թե ինչպես աճեց կոմյերիտմիության ազգեցությունը միջազգային յերիտասարդության շարժման վրա։

Թե կոմյերիտմիության հիմնադրումից առաջ (առաջին համագումարում, 1918 թվին), և թե հատկապես նրանից հետո, ուստական յերիտասարդությունն ուշադությամբ հետևում եր,

թե ինչ ե արել, ինչպես ե պայքարել կապիտալիստների դեմ արտասահմանյան բանվոր յերիտասարդությունը։

1919 թվին Ռուսաստանի կոմյերիտմիությունն առաջին անգամ մասնակցում ե յերիտասարդական միջազգային համագումարին (կոնգրեսին) Բերլինում (Գերմանիայում)։ 1919 թվի նոյեմբերին կայացած Բերլինի համագումարը, առաջին համագումարն եր, ուր և կազմակերպվեց կոմմունիստական Յերիտասարդական ինտերնացիոնալը։

Արդեն այդ համագումարում Ռուսաստանի կոմյերիտմիության ու նրա պատգամավորների ազգեցությունը մեծ եր։ Առաջին անգամ արտասահմանյան ընկերները զեկուցում լսեցին, թե ինչպես ե ծնվել, աճել և ինչպես ե աշխատում Ռուսաստանի կոմյերիտմիությունը։

Հաջորդ տարում (1920) Արևելքում սկիզբ ե առնում կոմմունիստական յերիտասարդական շարժումը—նախ Թուրքեստանում, Ադրբեյջանում, հետո այնպիսի յերկրներում, ինչպիսին ե Չինաստանը, Ճապոնիան և այլն։ Դրանից հետո ԽՍՀՄ կոմյերիտմիության ազգեցությունը նշանակելիորեն աճում է։ Նրան են հետեւում, նրան են լըսում, նրանից են սովորում։

Կոմյերիտմիության նշանակությունը համաշխարհային յերիտասարդական շարժման մեջ ավելի շատ ե աճում 1921 թվին, ԿՅԵԻ յերկրորդ համագումարի ժամանակ։ Այդ համագումարը կայացավ Մոսկվայում, այնտեղ վորոշում ընդունվեց ԿՅԵԻ-ի Գործադիր Կոմիտեն Մոսկվա տեղափոխելու մասին։ ԿՅԵԻ-ի Գործկոմի տեղափոխումը Մոսկվա հատկապես ուժեղացրեց ԽՍՀՄ Կոմյերիտմիության նշանակությունը։

Կոմյերիտմիությունն արտասահմանյան ընկերների վրա ազդեցություն ձեռք բերեց և այն ոգնությամբ, վոր ցույց տվեց նրանց։ Միջազգային այն վճարը (հնգնոց), վորը հավաքվում է մեր բջիջներում, գնում ե արտասահմանյան ընկերներին, վորոնք դեռևս կապիտալիստների իշխանության տակն են գտնվում։

ԽՆՏԵՐՆԱԾԽՈՆՍԼ. ԴԱ.ԽՏԵՆԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր կոմյերիտականը պետք ե հասկանա, վոր Հոկտեմբերյան պրոլետարական հեղափոխությանը պետք ե հաջորդի միջազգային հեղափոխությունը։ Մեր յերկրում պրոլետարիատի հաղթանակից հետո մենք արդեն մըտել ենք, ինչպես ասում եր ընկ. լենինը, միջազգային հեղափոխության ըրջանը։ Յե կոմյե-

րիտականները պետք ե պատրաստ լինեն միջազգային այդ հեղափոխությանը։ Նրանք պետք ե տոգորվեն միջազգային հեղափոխության վոգով, վորին պետք ե նալաստի ինտերնացիոնալ (միջազգային) դաստիարակությունը, վոր կիրառում ե կոմյերիտմիությունը։ Ինտերնացիոնալ դաստիարակությունը լենինյան դաստիարակության մասն ե։

ԽՍՀՄ կոմյերիտականները պետք ե իմանան արտասահմանյան ընկերների պայքարի պատմությունը, կոմյերիտմիության գրությունը զանազան յերկրներում և իրենց կոմյերիտմիության նշանակությունը, վորպես կոմյերիտինտերնացիոնալի առաջապահ գնդի։

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ նշանակություն ունի ԽՍՀՄ կոմյերիտմիությունը կոմմունիստական յերիտասարդական մյուս բոլոր կազմակերպությունների մեջ։
2. Ի՞նչպիսի պարտականություններ են գրվում կոմյերիտականի վրա, վորպես ԿՅԵԻ-ի անդամի։
3. Ի՞նչպես աճեց ԽՍՀՄ կոմյերիտմիության աղդեցությունը ԿՅԵԻ-ի մեջ։
4. Ի՞նչի համար ե հարկավոր կոմյերիտմիության մեջ ինտերնացիոնալ դաստիարակություն կիրառել։

9. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՒԵՍ ՅԵՐԻՏԱՍԱՐԴ
ԼԵՆԻՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՄԽՈՒԹՅՈՒՆ ԼԵՆԻՆՑԱՆ ՎԵՐԱՆՎԱՆՈՒՄԸ

1924 թվի հուլիսին կայացավ Համ. ԿՅԵՄ VI համագումարը։ Այդ համագումարը առաջնն եր մեր առաջնորդի և ուսուցչի՝ Վլադիմիր Իլիչ Լենինի մահվանից հետո։ VI համագումարի գլխավոր վորոշումներից մեկն եր ՀԱՄԿ-ՅԵՄ վերանվանել Լենինացն կոմյերիտմիություն։

Վերանման առթիվ VII համագումարը մանիքստ բաց թողեց՝ զիմում բոլոր կոմյերիտականներին, բանվորագլուղացիական, յերիտասարդությանը։

Այդ մանիքստում խոսվում ե այն մեծ պատասխանատվության մասին, վոր իր վրա յե վերցրել կոմյերիտմիությունն ընդունելով լենինյան կոչումը, այն խնդիրների մասին, վորոնք կանգնած են լենինյան կոմյերիտմիության առաջ կապված վերանվանման հետ։

ԽՆՉՈՒ ՄԽՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՉՎԵՑ ԼԵՆԻՆՑԱՆ

Մանիքստում պատասխանվում ե այդ հարցին, թե ինչու միությունը կոչվեց լենինյան՝ այնտեղ ասված ե՝

«Բղունեցինք մենք այդ վորոշումը՝ վոչ թե գեղեցիկ խոսքի, վոչ թե բոլոր լավագույն անուններից լավագույնը կրելու ցանկության համար, վոչ միայն նրա համար, վորպեսզի հարգանքով պատվենք մեծ հանգուցյալի հիշատակը»։

«Վա՞զ, մենք ընդունեցինք այն նրա համար, վորպեսզի ԽՍՀՄ բնակվող բոլոր ժողովուրդների ամբողջ աշխատավոր յերիտասարդությունը, իր առաջապահ զնդիք՝ կոմյերիտմիության հետ միասին, տոգորվելով մի կամքով և ամուր վըճականությամբ՝ սովորի ապրել, աշխատել ու պայքարել լենինաբար, իրականացնել լենինի կողմից մեզ թողած ավանդները»։

Կոմյերիտմիության առաջ կանգնած զիմավոր խնդիրները թվելուց հետո, մանիքստում ասված ե՝

«Նրա համար, վորպեսզի կոմյերիտականները հատուկ յեռանդով, հատուկ հաստատակամությամբ ու համառությամբ աշխատեն այդ խնդիրներն իրագործել մենք մեր միությունն անվանում ենք լենինյան ու պարտավորվում ենք լինել ամենաառաջին զինվորները, աշխատավորներն ու աշակերտները. պարտավորվում ենք կազմակերպել ամբողջ բանվորագլուղացիական յերիտասարդության ուսուցումը, աշխատանքն ու պայքարը»։

ՄԵՇ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՎՈՒԹՅՈՒՆԸ

Այս բոլորից յերկում ե, թե ինչպիսի մեծ պատասխանատվություն վերցը եց իր վրա կոմյերիտմիությունը, յերբ ընդունեց Լենինյան կոմյերիտմիության կոչումը:

Յև յուրաքանչյուր կոմյերիտականը, յուրաքանչյուր բանվորն ու գյուղացին, վոր մատնում ե կոմյերիտմիության մեջ, աետք ե զգայդ մեծ պատասխանատվությունը:

Պետք է ինձնաւ, վոր մտնելով Լենինյան կոմյերիտմիության մեջ, նա հանդիսանում ե յերիտասարդ լենինական, վոր նա այդ փառավոր անունը նրա համար ե կրում, վորպեսզի շարունակի մեծ ուսուցչի անմահ գործը:

ՀԱՐՑԵՐ


1. Կոմյերիտմիությունը յերբ անվանվեց Լենին. յան կոմյերիտմիություն:
2. Ինչո՞ւ կոմյերիտմիութունն անվանվեց Լենինյան:
3. Ինչպիսի՞ պատասխանատվություն վերցը եց իր վրա կոմյերիտմիությունը. ընդունելով Լենինյան կոչումը:

4. Ինչպիսի՞ պատասխանատվություն ե վերցնում իր վրա յերիտասարդ բանվորն ու գյուղացին, յերբ նա մտնում ե Լենինյան կոմյերիտմիության մեջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- | ԵԶ | |
|----|--|
| 3 | 1. Պետք է իմանալ, թե ինչ է կոմյերիտմիությունը |
| 6 | 2. Կոմյերիտմիությունը վորպես բանվորա-գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպություն |
| 18 | 3. Կոմյերիտմիությունը վորպես Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պաշտպան |
| 27 | 4. Կոմյերիտմիությունը վորպես բանվորա-գյուղացիական յերիտասարդության շահերի պաշտպան |
| 39 | 5. Կոմյերիտմիությունը վորպես մասնակից սոցիալիստական շինարարության |
| 55 | 6. Կոմյերիտմիությունը վորպես կոմմունիզմի դպրոց |
| 63 | 7. Կոմյերիտմությունը վորպես կոմմունիստական կուսակցության ոգնական |
| 75 | 8. Համ. ԿՅԵՄ վորպես ԿՅԵՒ-ի առաջապահ գունդը |
| 80 | 9. Կոմյերիտմությունը վորպես յերիտասարդ Լենինականների Միություն |






ԳՐԱԴԱՐԱՆԸ Ե 25 ԿՈՊ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0191429

